

Աշխատության հեղինակը Սեանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի դասախոս է: Ավելի քան տասնվեց տարի դասավանդում է «Հայոց պատմություն» եւ «Ընդհանուր ազգաց պատմություն» առարկաները, բացի այդ թերթերում հաճախ հանդես է գալիս հոգեւոր թեմաներին վերաբերող հոդվածներով: Նա նաեւ ռուսերենից թարգմանել է Սիդուանոս Աթոսացու «Գրվածքները», ինչպես նաեւ «Բարեպաշտության թանգարանը», որն Ընդհանրական եկեղեցու հայրերի վարքը ներկայացնող ժողովածու է: Եթե առաջին երկը դեռևս չի տպագրվել, ապա երկրորդը հրատարակվել և լայն ընդունելության է արժանացել ընթերցողի կողմից:

«Վասն հիվանդացը» հեղինակի փորձն է բացահայտելու հիվանդության հոգեւոր պատճառը: Աշխատանքի մեջ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Առաքյալների, եկեղեցու Սուրբ Հայրերի օրինակով ցույց է տրված, թե հավատացյալ մարդն ինչ վերաբերմունք պիտի ունենա հիվանդության նկատմամբ եւ ինչ վարք ցուցաբերի նեղության ժամանակ: Նշված են նաեւ մի քանի աղոթքներ, որոնք կարելի է կարդալ հիվանդ ժամանակ:

## ՎԱՍՆ ՀԻՎԱՆԴԱՑ

### ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ՝ ՀՐԱԶ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ

«... եւ Նրա՛ վերքերով մենք բժշկուեցինք»:

Եսայի 53:5

Ինքնաճանաչման, թե՞ աշխարհի գալու առաջին իսկ պահից մարդ-արարածը ձգտում է երջանկության: Այդ երջանկությունը նա հաճախ փնտրում է երկրային կյանքում՝ հարստության, փառքի, մարմնական սիրո, խրախճանքի... մեջ: Բայց, ինչպես ժողովողը կասեր. «Ունայնություն ունայնությանց», քանզի առանց Տիրոջ չկա եւ չի կարող լինել ո՛չ հոգու հանգստություն, ո՛չ երջանկություն:

Մարդն ի սկզբանե ճշմարտություն է փնտրում: Հաճախ կարծում է, թե հասել է դրան եւ գիտի, ճանաչում է այն, բայց շուտով նկատում եւ հասկանում է, որ իր իմացած-ճանաչածն ընդամենը ստվեր է եւ ոչ ավելին: Այդ ստվերն էլ հաճախ չքանում , այրվում է կասկածանքի եւ երկմտանքի հնոցում:

Մարդը խղճի հանգստություն է փնտրում, բայց աշխարհի սին ու դատարկ հոգսերը շեղում են նրան, ստիպում անինաստ կերպով ծախսել Տիրոջ կողմից իրեն տրված այդքան թանկ ժամանակը, եւ խղճի հանգստություն ձեռք բերելու փոխարեն մնում է դատարկածեռն ու հոգսերին գերի:

Աշխարհիս իմաստունները հաշվել են, որ նույնիսկ երկար տարիներ ապրած մարդու կյանքում երջանիկ օրերը մի քանիսն են: Կամ, որ ավելի տխուր է, երջանկություն ասածն ամփոփվել է ընդամենը մի քանի ժամի կամ րոպեի մեջ:

Բայց մարդկային, հիմնականում արյունով ու արցունքով շաղախված պատմության մեջ եղել են ոչ քիչ դեպքեր, երբ սովի, ցրտի տառապանքի մեջ գտնվող մարդիկ իրենց երջանիկ են համարել: Չեն վշտացել, չեն տրտմել, չեն տրտնջացել, թեպետեւ գամված են եղել անկողնուն կամ անդամալույծի սայլակին:

Եվ ինչո՞ւ: Գուցե այն պատճառով, որ աշխարհում որեւէ փրկություն կամ բուժում չակնկալելով բժիշկներից հույսները դրել են ինչ որ սին բանի վրա՞: Գուցե ոչ մի աստվածային ձեռք ու նախախնամություն էլ չկա՞ եւ ընդամենը գեղեցիկ պատրանք է ամեն ինչ: Կամ գուցե տառապանքով զարկված մարդկային հոգիներն այլ ճանապարհ չունեն՞ն ինքնախաբեությունից բացի:

Սակայն մարդկային տառապալից պատմության թեկուզեւ թեթեւակի քննությունը ասում է՝ ոչ: Յուրաքանչյուր հիվանդություն, որ տրվում է մարդուն, կարող է ունենալ եւ երկրային, եւ երկնային պատճառ: Մարդը, որ միասնությունն է հոգու եւ մարմնի, հիվանդանում է այն ժամանկ, երբ խախտվում է այդ երկու տարրերի հավասարակշռությունն ու ներդաշնակությունը:

Մեր կյանքը լի է հոգսերով, տառապանքով, հաճախ՝ ապարդյուն ջանքերով, ինչ որ սին նպատակի հասնելու համար ծախսած առեւելի ջանքերով: Ավա՜ղ, նաեւ հիվանդություններով: Հաճախ աշխարհիկ բժիշկներն իրենց արհեստավարժ ճարտարությամբ, տեխնիկական զինվածությամբ ոչնչով օգնել չեն կարողանում, եւ մարդը սապատի նման իր մեջքին կրում է իր ցավը, իր հիվանդությունը: Եվ ահա առաջանում է հարցը. «Իսկ ինչո՞ւ ինքը, իսկ ինչո՞ւ այսպես»: Հետո, ժամանակ հետո, երբ ընկղմվում է ցավի խորխորատն ու թանձրացյալ տառապանքի միջից աչքերը հառնում է Խաչյալին, զարմանում Նրա խոնարհության, հեզության, համբերության վրա: Եվ հանկարծ հասկանում է, որ Նա խաչվեց մարդկանց եւ առաջին հերթին հենց իր համար: Խաչվեց խաչելու համար մեղքը, քավելու համար մեղքը եւ վերացնելու համար այն աշխարհի երեսից:

Շատ իմաստուններ են փորձ արել պատասխանելու այն հարցին, թե ո՞րն է արմատը ցավի եւ հիվանդության, որտեղի՞ց է գալիս ապականացու բնությունը մարդու, ինչպե՞ս պահել իրեն հիվանդության ժամանակ: Այս եւ նման այլ հարցերի պատասխաններն հնուց ի վեր հետաքրքրել են մարդուն: Դարեր ի վեր շատ իմաստուններ փորձել են գտնել այն հրաշք բալասանը, որը մարդու ապականացու եւ խոցելի մարմինը անապակ եւ անմահ կդարձնի: Փիլիսոփաները փորձել են հասկանալ կյանքի ու մահվան առեղծվածը, բացատրել հիվանդությունների ոչ երկրավոր պատճառը, բայց մնացել են անպատասխան, եւ կամա, թե ակամա եկել, խոնարհվել են Քրիստոսի խաչի ու Խաչյալի առաջ, հասկանալով, որ Նա է ճանապարհը եւ միայն Նա գիտի ճշմարիտ պատասխանը մարդկությանը հետաքրքրող բազում հարցերի:

«Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, եւ լուսավորում է իմ շավիղները», - ասում է Սաղմոսերգուն /Սաղմ. 118, 105/, իսկ Քրիստոսի բազում ձգնավոր հետետորդներ ապրած կյանքով ցույց են տվել, թե ինչ է քրիստոնեությունը եւ ինչպես ընդունել նեղությունները, ինչպես տանել վշտերն ու ցավերը: Նրանք Քրիստոսի հավատքի ճշմարիտ եւ կենդանի իրագործողներն են եղել երկրի վրա, ապրել են հանուն Քրիստոսի, լիացած Սուրբ Հոգու շնորհներով: Նրանք Տիրոջ պատվիրաններին հավատարիմ են մնացել տառապանքի, ցավի, նեղության, հիվանդության ժամանակ եւ իրենց վարքով հաստատել են, որ փրկությունը համբերության, երկայնամտության եւ Քրիստոսի ողորմածությանն ապավինելու մեջ է:

Արարիչն իր Որդուն տվեց մեր մեղքերը քավելու համար, Տերն ամեն օր հազարավոր բարիքներ է ցողում մեզ վրա իր ողորմությամբ: Ուրեմն ինչպես որ բարիք ստանալիս ենք օրհնում Տիրոջը, այնպես էլ օրհնենք, երբ նա մեզ տկարություն, հիվանդություն կամ նեղություն ուղարկի: Մարդն առաջին հերթին պետք է պաշտպանվի ինքն իրենից: Քանզի մեղքի արմատը մարդու մեջ է, քանզի Տերն Իրեն ապավինողներին երբեք չար չի կամենում եւ չի ցանկանում մահը մեղավորների:

«Քեզ հետ պատահող ամեն բան ընդունիր որպես բարիք,- ասում է Եփրեմ Ասորին,- իմացիր, որ ոչինչ չի պատահում առանց Աստծո... Եվ սատանան իր ուզածի պես չի կարողանում փորձանքի մեջ գցել հոգուն, այլ այն չափով միայն, ինչ չափով որ նրան թույլ է տալիս Աստված»: /2ՉՏՐՎիպրՑՉՏ րՉՅօ. ՏՏՓՏԶ, Ծ. 1849, Ց.14, րՑՐ. 151,153/: Պատահական չէ, որ Օգոստինոս Երանելին ասում է. «Այդպես նրանց միջոցով, ովքեր վատ էին

վարվում, Դու բարիք էիր գործում ինձ, եւ իմ սեփական մեղքերի համար արդարացիորեն պատժում էիր ինձ: Չէ՞ որ Դու պատվիրեցիր, եւ այդպես էլ կա, որ մարդու յուրաքանչյուր անկանոն հակում լինի իր իսկ պատիժը» /ընդգծ. մերն է.- Հ.Բ./: /Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ, թարգմանությունը լատիներենից՝ անգլերեն թարգմանության համեմատությամբ՝ Խաչիկ Գրիգորյանի, Ե. 2002, գիրք I, գլ. XII, էջ 12: /Այսուհետեւ՝ Օգոստինոս.../:

Ընդգծվածից պետք է հասկանալ, որ «անկանոն հակում» ասածն այլ բան չէ, քան մեղքը: Ուրեմն պատիժը մեղքի արդյունք է, եւ այն երբեք ավելի խիստ չի լինում, քան՝ մեղքն է: Սակայն թե՛ մեղքի, թե՛ դրա դիմաց տրվող պատժի չափը որոշողը միայն Աստված է:

Նենց այս սկզբունքից ելնելով էլ պիտի պնդենք, որ «եթե մեզ հետ ինչ որ բարի բան է պատահում, ապա դա Աստծո նախախնամության գործն է, իսկ եթե չար՝ ապա դա մեղքերի պատճառով է: Քանզի, արդարեւ, այն ամենը, ինչ որ մենք կրում ենք, կրում ենք մեր մեղքերի պատճառով»: /Վարք եւ բարք սուրբ հարանց, գիրք Բ, Երանելի աբբա Դորոթեոս Գազացի, Երեւան 2003, էջ 120 /Այսուհետեւ՝ Աբբա Դորոթեոս, /:

Հասկանալի է, որ փորձիչը սատանան է, սակայն նա երբեք ինքը չի որոշում չափը: «Եվ սատանան հանդգնում է փորձության ենթարկել այն չափով, որ չափով որ հրաման է ստանում, /Դա/ հայտնի է Հոբի փորձություններից, թե ինչպես /սատանան/ մինչեւ Աստծուց հրաման չստացավ, չհանդգնեց փորձության ենթարկել նրան: Այլեւ /հայտնի է/ խոզերի երամակից, որի մեջ դեւերը չհամարձակվեցին մտնել, մինչեւ Տիրոջից հրաման չստացան» /Մատթ. Ը. 30-32/»: /Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Ե. 1994թ., էջ 147 /Այսուհետեւ՝ Եզնիկ.../:

Աշխարհում գնալով ավելանում է բժիշկների, բժշկական տեխնիկայի, դեղամիջոցների քանակը, բարձրանում է բուժման մակարդակը, բայց չեն պակասում հիվանդությունները: Ընդհակառակը՝ ավելանում է դրանց քանակը, տեսակը, հին հիվանդությունները փոխում են իրենց տեսքը... Առաջին հայացքից դրա պատճառն անհասկանալի կարող է թվալ, սակայն բավական է հիշել հիվանդության բուն պատճառը՝ մեղքը, որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի: Հիվանդությունների աճը, բազմազանությունը ցույց է տալիս, որ մարդկության մեղքերն ավելի բազմազան ու առավել տարատեսակ են դարձել, իսկ մարդկությունն այն հաճախ չի զգում:

Ուշագրավն այն է, որ մեր հոգեւոր հայրերը մարդու համար անհրաժեշտ են համարել նեղությունները, հալածանքներն ու հիվանդությունները: Դրանք դեղ են համարել քրիստոնյայի հոգու համար: Մարդու համար անհամեմատ ավելի վատ է, եթե նա ոչ մի փորձություն ու վիշտ չի ճաշակում: Այդպես հնարավոր է մոռանալ Աստծո մասին եւ հեռանալ Երկնքի Արքայություն տանող ճանապարհից: Աստծուն գոհություն եւ փառք պիտի տաս, երբ Նա քեզ որոշ փորձություն է ուղարկում: Դա նշանակում է, որ Նա քեզ չի մոռացել եւ Իր շնորհը չի վերցրել քեզնից:

Ահա թե ինչ է պատմում հոգեւոր հայրերից մեկը, որ Ալեքսանդրիայում եկեղեցի էր մտել աղոթելու համար: Նա այնտեղ տեսնում է սեւազգեստ մի այրի կնոջ, որ Փրկչի պատկերի առաջ աղոթում եւ լաց էր լինում, անընդհատ կրկնելով. «Մի լքիր ինձ, տեր, գթա, ողորմած»:

«Ինչո՞ւ է նա այսպես լալիս»,- մտածում է հայրը եւ նրա ծառային պատվիրում, որ աղոթքից հետո տիրուհին մոտենա իրեն:

«Ինչո՞ւ ես այդպես վշտահար եւ ինչո՞ւ ես այդպես լալիս»,- հարցնում է ծերունին կնոջը:

«Հայր իմ, դու չգիտես իմ վիշտը,- լաց լինելով ասում է կինը,-ես ապրում եմ մարդկանց մեջ, բայց ոչ մեկից ոչ մի վիրավորանք չեմ տեսել: Ահա հենց նրա համար եմ լաց լինում, որ ապրում եմ Աստծուց մոռացված: Տերը մոռացել է ինձ այցելել եւ արդեն երեք տարի է, որ ոչ մի վիշտ չեմ տեսել: Ո՛չ ես եմ հիվանդացել, ո՛չ որդիս: Նույնիսկ մի հավ չի կորել իմ տանից: Մտածում եմ, որ երեւի իմ մեղքերի համար է Աստված լքել ինձ եւ աղաչում

եմ, որ Նա ողորմա ինձ»: /Օժիէ՛ն Է՛ Իժեւիձն Ծժեհոժեւիհիէ՛ն Իձձձձձ, հիհոձձէ՛ն Իժիժեւիձձէ՛ն Աժեւիժե՛ն Այւ-ձիւի, "Իհիւիէ՛ն", 1998, հոժ. 63/:

Ահա թե աստվածավախ մարդիկ ինչպես են ընդունում երկար ժամանակ անցավ կամ անփորձանք մնալը: Նեղությունները համարում են Աստծո կողմից իրենց նկատմամբ ցուցաբերած առանձնակի ուշադրության արդյունք: Սակայն դա կարծես թե քիչ է, հարկավոր է այս կյանքում մեր նկատմամբ դեւերի ու մարդկանց ցուցաբերած անարդարությունները համբերատար կերպով տանել: Աստված «այդ բոլոր անարդարությունները զրանցում է եւ տոկոսներով պահպանում իր երկնային խնայարքույկում»: /Նձձձձ Իձեհէ՛ն Նձյժիձիձձ, Նձյժի-ձժիժեւիձձ Նձձձձձձ Էձձձ, 2001ձ., հոժ. 133. /Այսուհետեւ՝ Պաիսի Սուրբարեցի.../:

Անհնար է, որ քրիստոնյան իր կյանքն Աստծուն նվիրելով զերծ մնա փորձություններից: Պատահական չէ, որ Հետուի որդի Սիրաքն ասում է. «Որդեակ, եթե նվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների պատրաստիր: Ուղիոր քո սիրտը, համբերիր եւ շփոթության մի մատնվիր աղետների ժամանակ» /Սիրաք 2,12/:

Տիրոջը նվիրված կյանքը լի է փորձություններով, ցավերով, վշտերով ու տառապանքներով: Իսկ մեղքի համար ստացած արդարագույն պատիժն այն է, որ մարդ կորցնում է այն, ինչը չի ցանկացել լավ օգտագործել: Եթե ասենք առողջությունը ճիշտ չի օգտագործվել, այն խաթարվում է, կորցվում: Նույնպես նաեւ՝ Տիրոջ կողմից տրվող մյուս պարգևները: /Օգոստինոս, էջ 321 /տողատակ 37/:

Գրեթե նույն կերպ է դատում ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս Բլեզ Պասկալը, որը 24 տարեկանում հիվանդանում է շատ ծանր եւ աղոթքի ու խորհրդածությունների ժամանակ գրում. «Դու ինձ առողջություն շնորհեցիր, որպեսզի Քեզ ծառայեմ, իսկ ես այն վատնեցի սին նպատակների համար: Դու ինձ հիվանդություն ես ուղարկում, որպեսզի ուղղես ինձ. ուրեմն մի թող, որ զայրացնեմ Քեզ իմ անհամբերությամբ /ընդգծ. մերն է. Հ. Բ./,- եւ ապա շարունակում է. «Տեր, շնորհիր ինձ ուժ, որ կարողանամ զգոնությամբ վերաբերվել բոլոր իրադարձություններին՝ ինքնավստահության չտրվելով եւ չդառնալով դատավոր ու հետեւանքների համար պատասխանող, քանզի մենք չզգիտենք, թե ինչ խնդրենք եւ ինչ ցանկանանք: Զգիտեմ, թե ինչն է օգտակար ինձ. առողջություն՞ւնը, թե՞ հիվանդությունը, հարստություն՞ւնը, թե՞ աղքատությունը: Այդ մասին դատելը վեր է մարդու եւ հրեշտակների ուժերից. այն ծածկված է Քո նախախնամության գաղտնիքներում, ինչի առջեւ խոնարհվում եմ՝ չհանդգնելով հասու լինել դրան»: /«Շողակն Արարատյան», Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի երկշաբաթաթերթ, հուլիս Ա, թիվ /80/, 2003թ./:

Շատ հաճախ փորձության ենթարկվողն ինքը չի իմանում դրա իրական պատճառը կամ ողջ խորությամբ չի զհտակցում իր մեղքը սակայն բոլոր սուրբ հայրերը միաբերան պնդում են, որ փորձություններն օգտակար են, եւ հատկապես այն ժամանակ, երբ մարդը «դրանք կրում է առանց խռովքի» /Աբբա Դորոթեոս, էջ 177-178/:

Նա նաեւ խորհուրդ է տալիս. «Ստիպիր քո սրտին հավատալ, որ անպատճառ դու ինքդ ես առիթ տվել փորձությանը, թեկուզ հիմա, այս պարագայում դու այդպես չես գտնում: Նվաստացրու քեզ, համբերիր, աղոթիր, եւ ես ապավինում եմ բարերար Տեր Քրիստոսի գթասրտությանը, որ Նա կհեռացնի փորձությունը»: /Աբբա Դորոթեոս, էջ 237/:

Եվ, քանի որ Աստծո մեջ չարիք չկա, եւ քանի որ Աստված անսահմանորեն ողորմած է ու գթասիրտ, եւ քանի որ Աստված ձանաչում է Իրեն ապավինած յուրաքանչյուր մարդու եւ լավ գիտե, թե ինչ է անհրաժեշտ նրան, ուրեմն այն, ինչ պատահում է մեզնից ամեն մեկին, բարի է եւ արդար: Բարի է, քանի որ արվում է մեր օգուտի համար, եւ արդար, քանի որ արվում է Աստծո արդարադատ ձեռքով:

«Քանզի այն ամենից, որ անում է Աստված, չկա ոչ մի այնպիսի բան, որ բարի չլինի, այլ «ամեն բան բարի է» /Ծննդ. 1,3/:

Եվ այսպես ոչ ոք չպետք է վշտանա կատարվածի համար, այլ ամեն բան, ինչպես ասացի պետք է վերագրի Աստծո նախախնամությանը եւ հանգստանա»: /Աբբա Դորոթեոս, էջ 163-164/:

Հաճախ հարց է առաջանում. իսկ ո՞րն է պատիժը: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա պիտի ասենք՝ այն գործողությունը, որը անկախ է մեր կամքից եւ տառապանք, անհանգստությունը կամ ցավ է պատճառում մեզ: Ղա կարող է լինել նաեւ գործողությունների ազատությունից զրկված լինելը, վիրավորանք ու անպատվություն կրելը, նյութական վնաս ստանալը եւ այլն: Սակայն, եթե ապավինում ենք Աստծո կամքին, ապա պետք է ընդունենք, որ այն «ինչ կատարվում է մեզ հետ, կամ ուսուցանում է մեզ, կամ լինում է նախկին մեղքերից մաքրելու համար, կամ նրա համար, որպեսզի ուղղվեն ներկա բացթողումները կամ որպեսզի փրկեն ապագայի անկումից»,- ասում է սուրբ Մաքսիմ Խոստովանահայրը: /*Āîáðîðîëþáèè, èçáðáííâ äëÿ ìèðÿí, Ì. 2002, ìðð. 114./:*

Ահա հենց այս տրամաբանությամբ էլ մարդը որքան զուրկ է մնում, չարչարվում, նեղվում ու համբերում է, իր համար անապական գանձ է պատրաստում երկնքում, իսկ եթե տրտնջում ու նեղսրտում է, ապա աշխատանքն իզուր է, քանզի նա կարող է անվարձ մնալ: /Եզնիկ, էջ 245/:

Քննությունը ցույց է տալիս, որ մարդն ինչպիսի մեղք էլ որ գործի, այն առաջին հերթին ուղղված է ոչ թե Աստծո, այլ սեփական անձի դեմ, «որովհետեւ նույնիսկ ինչով որ հանցավոր են Քո հանդեպ, դրանով իսկ չարիք են գործում իրենց հոգիներին»: Նրանք հաճախ սեփական անօրենություններից խաբվելով, փչացնում ու պղծում են իրենց բնությունը: «Կամ անզուսպ կերպով օգտագործում են թույլատրելի բաները, կամ այրվում անթույլատրելի բաների բաղձանքից, որոնք դեմ են բնությանը»: /Օգոստինոս գիրք III, գլ. VIII, էջ 42-43/:

Երկրի վրա երջանկություն մի փնտրիր: Երկիրը դրախտ չէ: Ադամի մեղքից եւ արտաքսումից հետո երկրի վրա դրախտ չկա: Եվ աշխարհում ամեն ոք իր խաչն ունի: Այն յուրաքանչյուր մարդու համար հենց իր ուժերի չափ է. ո՛չ ծանր է, ո՛չ թեթեւ: Ճիշտ է, ամեն ոք ունի իր խաչը, բայց մեկն այն կարող է կրել հոգու փրկության, մյուսը այն ծառայեցնել իր կործանման համար: Տերը մեզնից յուրաքանչյուրի վրա Իր խաչը դնելով ցանկանում է, որ մենք այն ծառայեցնենք մեր փրկության համար: Խաչն այդ նրա համար է, որ մենք կռվելով կրքերի դեմ զարդարվենք արտաքին ու ներքին սխրանքներով, հաղթահարենք կյանքի դժվարությունները եւ մեզ արժանի դարձնենք հավերժական հանգիստ մտնելու:

«Մի նախանձիր ուրիշին, համարելով, թե նրա խաչն ավելի թեթեւ է: Խաչի ծանրությունն ու կշիռը ոչ ոք չի կարող իմանալ բացի նրանից, ով այն կրում է: Անկասկած է միայն, որ դու ինչպիսի խաչ էլ որ ընտրելու լինես քեզ համար, ոչ մեկը քեզ հարմար չի լինի, բացի քո խաչից»: /*Óðîèè è ìðèìáðմ ծðèñðèáíñèíé íáàáæáմ, ñðð. 72./:* Ահա այդ է պատճառը, որ մարդ-արարածը ոչ թե ինքը պիտի ընտրի կամ փորձի փոխել Տիրոջ տված խաչը, այլ իմանա՝ ինչպես կրել այն: Իսկ խաչը կրելու համար առաջին հերթին հարկավոր է համբերություն, ապա՝ երկայնամտություն: Բայց այս երկուսից առաջ անհրաժեշտ է հույսը Տիրոջ վրա դնել, քանզի Նա է, որ գիտի բոլոր ճանապարհները եւ բոլորի ճանապարհները: Տերն ավելի լավ գիտի, թե մեզնից ամեն մեկին ինչ է պետք, ինչպիսի ծանրություն դնի յուրաքանչյուրիս ուսերին, ինչպիսի պայքար, ինչպիսի փորձություններ տա մեզ: Եվ քանի որ մարդկային ամեն մարմին ապականացու է եւ միայն Տերն է առանց մեղքերի, ուրեմն անպայման պետք է հուսալ Նրա ողորմածությանը: Մաքրվելու, անապական դառնալու համար մարդը պետք է մշտապես ձգտի հաղորդվել Քրիստոսի Մարմնին ու Արյանը: Գրիգոր Տաթևացին ասում է. «... Ինչպես Քրիստոսի մարմինը զերծ մնաց ապականությունից, այնպես էլ Քրիստոսի մարմնից հեղված արյունը մահից մինչեւ հարություն անապական մնաց»: /Գրիգոր Տաթևացի, «Ոսկեփորիկ» թարգմ. եւ ծանոթագրութ. Հակոբ Քյոսեյանի, «Գթություն», Ե. 1995, էջ 193/:

Նույն Տաթևացին մի այլ տեղում էլ ասում է. «Սակայն դառնանք մեզ եւ տեսնենք, թե որքան առավել է Քրիստոսի շնորհքը եւ պարգեւը հավատացյալներին եւ բարեգործներին, եւ այնքան առավել մեծ է անհավատներին եւ չարերին տրված պատուհասը»: /Գրիգոր Տաթևացի, էջ 95/:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մարդկանցից ոչ ոք չի կարող կատարյալ լինել հավատքի մեջ, ոչ ոք չի կարող իսկական բարեգործ լինել կամ համարվել, ուստի ե՛լ իր մեղքերի համար արժանի է բազմաթիվ պատիժների: Եվ միայն Տիրոջ ողորմածության շնորհիվ է, որ այդ պատիժները, տառապանքը, ցավը ավելի թեթև են լինում, ավելի մեղմ ու ավելի քիչ, քան դրանց արժանի է մեզնից յուրաքանչյուրը: Պատահում է, երբ նեղության մեջ ընկածը կամ հիվանդը աղերսանքով դիմում է Աստծուն, բայց Նրանից ցավերի եւ նեղությունների մեղմացում չի ստանում: Այդպիսի պահերին արդյոք պե՞տք է հուսահատվել, տրվել տկարությանը եւ կարծել, թե Տերը երես է թեքել իրենից: Քրիստոնեության ողջ պատմությունն ասում է՝ ոչ: Չի կարելի հուսահատվել, առավել եւս՝ տրտնջալ կամ փնթփնթալ ու դժգոհել Աստծուց: Սուրբ Սերապիոն եպիսկոպոսն ասում է. «Եթե Աստծուն աղաչես օգնել փորձության ժամանակ, եւ չլսի քեզ, մի վիատվիր, քանզի Ինքը քեզանից առավել գիտի քո օգուտը: Քո խնդրվածքներում Աստծուն մի ասա, թե վերցրու այս ինձանից կամ տուր ինձ այս, այլ այսպես աղոթիր. «Տեր Հիսուս, Դու ես իմ օգնականը, Քո ձեռքերում եմ, Դու գիտես իմ օգուտը, օգնիր ինձ: Մի թողնիր ինձ իմ կամքին հետեւել, մի թողնիր ինձ կորչել իմ մեղքերում, այլ գթա Քո ստեղծածին, մի գցիր ինձ Քո աչքից իմ մեղքերի պատճառով, քանզի Քեզ ապավինեցի: Բժշկիր իմ անձը, քանզի մեղանչեցի Քո հանդեպ, Քո առաջ եմ իմ բոլոր նեղիչները, եւ չկա ինձ ապավեն, Տեր, Քեզնից բացի: Փրկիր ինձ ըստ Քո ողորմության, եւ թող ամաչեն բոլոր ինձ վրա հարձակվածները, որոնք ձգտում են կորցնել իմ անձը, քանզի Դու, Տեր, ամենակարող ես, եւ Քոնն է փառքը հավիտյանս»: /Աղոթագիրք, «Գանձասար» 1992թ., էջ 36-37/:

Եկեղեցու բոլոր սուրբերն առանց բացառության խորհուրդ են տալիս հիվանդությունների, նեղությունների եւ վշտերի ժամանակ զինվել համբերությամբ:

«Ուստի ով չի համբերում, թող աշխարհից վերացնի բոլոր հակառակ ներգործություններն ու վշտերը,- ասում է Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցին,- իսկ եթե չի այնորժամ համբերել, աշխարհից անհամբերն ինքը կվերցվի, որ չի կամենում հնազանդվել տիեզերքի ընդհանրական կարգին, որ բաղկացած լինելով հակընդդեմ էություններից՝ հակընդդեմ ներգործություններ է առաջ բերում»: /Պողոս Պատրիարք Ադրիանապոլսեցի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին 1999, էջ 220/:

Մի այլ առիթ էլ Պողոս Պատրիարքն ասում է. «Ծանր-ծանր հիվանդություններ բուժելու համար աշխարհում ոչ մի դեղ այնպես զորավոր չհամարվեց, ինչպես համբերությունը: Որովհետեւ անպիտան էին դառնում բոլոր դեղերն ու բժիշկների հնարքները, եթե հիվանդն անհամբեր էր լինում բժշկի պատվիրանները պահելու մեջ»: /Պողոս Պատրիարք, նշվ. աշխ., էջ 223/:

Եվ եթե սա ճիշտ է, ինչպես Գրիգոր Նարեկացին կասեր «երկրավոր դեղատուրթան» /Գրիգոր Նարեկացի, Մատենանոցի ողբերգության, Երեսան 1979, գլ. ԽԳ/՝ եւ երկրավոր բժշկության պարագային, ապա առավելաբար ճշմարիտ է նաեւ երկնավոր բժշկության դեպքում: Բազում են սուրբ հայրերի վկայություններն առ այն, որ Աստծո կողմից թույլատրված փորձությունները համապատասխանում են մեր ուժերին: Փորձություններ, որոնց, ցավոք, հաճախ միանում են ոչ գթասիրտ մարդկանց ծաղրը եւ անհասկացողությունը եւ այդժամ մենք արդեն կտրվում ենք: /Տես Պաիսի Սուրբսարեցի..., էջ 131/:

Աշխարհում չկան անմեղ մարդիկ, քանզի բազում մեծամեծ մեղքերից ազատ մարդը, եթե նույնիսկ մեկ փոքրիկ մեղք ունենա, ապա դրանով նա բռնված կլինի: Աբբա Դորոթեոսն այդ մասին ասում է. «Արժիվը, եթե ամբողջովին ցանցից դուրս լինի, սակայն խճճվի նրա մեջ միայն մի մագիլով, ապա այդ փոքրիկ բանի պատճառով կտապալվի նրա ողջ զորությունը, քանզի մի՞թե նա արդեն ցանցի մեջ չէ, թեւս ամբողջովին գտնվում է նրանից դուրս, սակայն բռնված է նրանից ընդամենը մի մագիլով»: /Աբբա Դորոթեոս, էջ 163/:

Այդպես է նաեւ մարդը. եթե նույնիսկ իր էութեան մի փոքրիկ մասով գերի է մեղքին, ուրեմն գերի է ամբողջությամբ: Ասել է, թե շեղվել է աստվածային օրենքից եւ հենց իր շեղված լինելու պատճառով կամ դրա չափով էլ արժանի է պատժի:

Քրիստոսին հավատալ, նշանակում է խոնարհաբար եւ համբերատարությամբ տանել բոլոր փորձությունները: Հենց ելնելով մեր վերը նշված մեղքով բռնված լինելու վիճակից: Ելակետ ունենալով այն հանգամանքը, որ աշխարհում անմեղ մարդիկ չկան, պետք է համբերատար լինել, նեղությունները համարելով մեղսական վիճակից մաքրվելու յուրատեսակ բալասան: Աբբա Ջոսիման ասում է. «Վերացրու փորձություններն ու մտքերը եւ ոչ մի սուրբ չի մնա: Փրկարար փորձություններից փախչողը փախչում է հավերժական կյանքից: Սուրբ մարտիրոսների ու վեպե՞ր տվեցին պսակները, եթե ոչ նրանց տանջողները»: /*Մեծ թագաւորացի, զգաճաճիճի ձեզ յեծյի, ի. 2002, թժժ. 113./:*

Հայտնի է, որ հիվանդ մարդու սիրտը նեղված, հույսի թելը բարակած է լինում եւ կարճ է լինում համբերությունը: Սակայն ինչ էլ որ լինի, համբերությունը, երկայնամտությունը, երկրավոր բժշկությանը զուգընթաց հույսն առ Աստված ուղղելն անչափ կարեւոր է: Ինչպես կյանքի բոլոր պարագաներում, այս դեպքում նույնպես կարեւոր է հաճախակի եւ սրտալի աղոթելը:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մարմինը հոգու երկրավոր բնակարանն է, յուրատեսակ հագուստը: Ուրեմն հարկ է հոգալ մարմնի մասին, բայց չչնայելով այն: Կերակրել, բայց չպարարտացնել այն: Անկասկած ինչպես որ հոգին է ազդում մարմնի վրա, այնպես էլ հոգին ազդվում է մարմնից, քանզի մարդն այլ բան չէ, քան այդ երկուսի միասնությունը: Բայց քանի որ մարմինը հողեղեն է, ուստիեւ շատ ավելի ենթակա է մեղքի ազդեցությանը եւ այդ պատճառով էլ՝ քայքայման: Մարմինը մահկանացու է, հոգին՝ անմահ: Մարմնի եւ հոգու ներդաշնակությունը խախտվում է մեղքով: Հենց այդ մեղքն էլ հաճախ պատճառ է դառնում մարմնական եւ հոգեկան բազում հիվանդությունների:

Ի՞նչ է հիվանդությունը: Ավետարանը եւ հայրերը ուսուցանում են, որ այն կամա, թե ակամա, գիտակցաբար, կամ անգիտակցաբար գործած մեղքի արդյունք է: /Ասենք, որ չեն ժխտվում նաեւ ժառանգական հիվանդությունները: Գուցեեւ դրանք էլ պետք է համարել ծնողի մեղքի պատճառով երեխաներին տրված պատիժներ/: Որտեղ որ մեղքն է, այնտեղ ապականված եւ բնական ընթացքից շեղված է ամեն ինչ:

Օրինակ Ոչխարների ավազանի անդամալույծին բժշկելուց հետո Հիսուս «նրան գտավ տաճարում ու ասաց նրան. «Ահավասիկ առողջացար, այլեւս մի մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատահի քեզ» /Հովհ. 5. 14/:

Իսկ ի ծնե կույրին բժշկելուց հետո «իր աշակերտները հարցրին նրան եւ ասացին. «Ռաբբի, մեղքը ո՞ւմն է, որ կույր է ծնվել, սրա՞նն է, թե՞ հորն ու մորը»: Հիսուս պատասխանեց. «Ոչ դրա մեղքն է եւ ոչ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծո գործերը հայտնի լինեն» /Հովհ. 9. 2-3/:

Միայն այս մի հատվածի հպանցիկ քննությունը պարզորոշ բացատրում է հիվանդության առաջացման երեք պատճառ.

ա/ սեփական մեղք

բ/ ծնողների մեղք

գ/ մարդը հիվանդացել է, որպեսզի հայտնի լինեն Աստծո գործերը:

Պողոս Առաքյալն էլ հիվանդության պատճառ է համարում Տիրոջ Մարմնին ու Արյանը անարժան կերպով հաղորդվելը, ասելով. «... որովհետեւ ով ուտում է եւ խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում եւ խմում, քանի որ չի տարբերում Տիրոջ մարմինը: Դրա համար իսկ ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագաղտներ կան, եւ շատերն էլ մեռած են: Որովհետեւ եթե մենք մեզ քննեինք, ապա չեինք դատապարտվի:

Իսկ եթե դատվում ենք, Տիրոջից խրատվում ենք, որ աշխարհի հետ չդատապարտվենք» /Ա Կորնթ. 11. 23-32/ /Ընդգծումը հեղինակի/:

Մի այլ առիթով էլ Առաքյալն ասում է. «Իսկ արդ, բարի՞ն մահ եղավ մեզ համար. քավ լիցի. այլ մեղքը, օգտագործելով ինչ որ բարի է, ինձ մահ պատճառեց, որպեսզի պատվիրանի միջոցով մեղքը հայտնվի որպես մեղք իր իսկական սաստկությամբ» /Հռոմ. 7, 13/:

Քանի որ մարդն իր բնույթով հակասական է եւ «իր մտքով ծառայում է Աստծո օրենքին, իսկ մարմնով՝ մեղքի օրենքին» /Հռոմ. 7, 25/, այդ պատճառով էլ նյութեղեն աշխարհի նյութեղեն մասը՝ մարմինը խաթարվում է եւ ապականվում հիվանդություններով: Չմոռանանք, որ մարդկային մարմինը նյութ է, իսկ նյութն աշխարհի վրա Ադամական մեղքով դուրս եկավ իր նախնական աստվածաստեղծ վիճակից եւ ապականվեց: Հետեւաբար՝ ապականվեց նաեւ մարմինը մարդու՝ դառնալով մահկանացու:

Պողոս Առաքյալն ասում է. «Սպանեցեք ուրեմն ձեր երկրային ցանկությունները. դեն գցեցեք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չար ցանկություն եւ ազահություն, որ կռապաշտություն է: Դրա համար է, որ անհնազանդ որդիների վրա է գալիս Աստծո բարկությունը» /Պողոս. 3, 5-6/:

Տերը մեզ խրատում է մեր խոտոր ընթացքի համար, փորձելով հետ դարձնել չար գործերից, չար խորհուրդներից, չար մտքերից: Դրա համար էլ Առաքյալը կոչ է անում. «իր մարմինը պահել սրբությամբ եւ պատվով եւ ոչ թե ցանկության կրքով» եւ ապա պատվիրում է. «Թող ոչ ոք այդ բանում չափը չանցկացնի եւ չդիպչի իր եղբոր պատվին, քանզի այդ բոլոր բաների համար Տերը վրեժխնդիր է... արդարեւ Աստված չկոչեց մեզ պղծության, այլ՝ սրբության: Ահա թե ինչու ով անարգում է այս բանը, մարդուն չի անարգում, այլ՝ Աստծուն, որը եւ Սուրբ Հոգին տվեց ձեզ» /Ա Թեսաղոն. 4, 3-7/:

Սարգիս Շնորհալին նույնպես հիվանդության պատճառ է համարում մեղքը. «Հիվանդությունները մեղքի հետեւանքով առաջացան,- ասում է նա:- Արդ, երբ արժանավոր անձանց աղոթքների միջոցով բժշկվում է հիվանդությունը, նրա հետ միասին վերցվում են նաեւ հիվանդության պատճառ դարձած մեղքերը: Այս օրենքը նախ մեր Տերը մեզ սովորեցրեց, երբ անդամալույծին ասաց. «Քո մեղքերը թող ներված լինեն» /Մարկ. Բ. 5/: Սկզբում մեղքի պատճառը վերացվեց, ապա բժշկեց նրա մարմինը՝ դրանով ցույց տալով, որ հիվանդությունը մեղքից էր առաջացել, ինչպես որ նաեւ մեկ ուրիշ անդամալույծի ասաց. «Ահա առողջացար, այլեւս մի մեղանչիր, որպեսզի ավելի չար բան չպատահի քեզ» /Հովհ. Ե. 14/:

Տեսա՞ր, թե ինչպես հայտնապես ցույց տվեց, որ հիվանդությունը մեղքի արդյունք է: Քանզի եթե մահը, որ գլուխն է հիվանդության, մեղքով սկիզբ առավ, ապա որքան առավել՝ հիվանդությունը»: /Սարգիս Շնորհալի վարդապետ /ԺԲ դար/, Խրատանի Ա, Հատվածներ Հակոբոս Առաքյալի ընդհանրական թղթի մեկնությունից, Թարգմանությունը գրաբարից Սարգիս սարկավագ Կնյազյանի, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2002թ, էջ 20/:

Ուրեմն նախ Ադամի մեղքի պատճառով երկրի վրա ամեն ինչ եղծվեց: Մարդը դուրս եկավ այն արդար վիճակից, որի մեջ նրան դրել էր Արարիչը, նրան ստեղծելուց հետո: Այդ խոտոր ընթացքը շարունակվում է նաեւ այժմ, քանի որ աշխարհ է մտել մեղքը: Սակայն հարկ է ասել, որ ողջ մարդկության համար ընդհանրական համարվող այդ պատճառից զատ յուրաքանչյուր ադամորդի իր հերթին բազում մեղքեր ունի:

Լինում են դեպքեր էլ, երբ Աստված ցավ է տալիս Իր ընտրյալներից մեկին: Այդ ցավը նրան տրվում է իր իսկ օգուտի համար: Առաքյալն այդ մասին ասում է. «Եվ որպեսզի այդ հայտնությունների առատությամբ չհպարտանամ, ինձ տրվեց մարմնի խայթ, սատանայի մի պատգամավոր, որ բռնցքահարի ինձ, որպեսզի չգոռոզանամ: Եվ դրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան ինձնից հեռացնի: Բայց ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավ է, որովհետեւ Իմ զորությունը տկարության մեջ է ամբողջական դառնում»: Եվ արդ, լավ է, որ պարծենամ իմ տկարություններով, որպեսզի իմ մեջ բնակվի Քրիստոսի զորությունը» /Կորնթ. Բ, 12, 7-9/:



Պողոս Առաքյալից բերված այս հատվածը տալիս է բազում հարցերի պատասխաններ: Առաջինը հիվանդություն է տրվում ոչ միայն հասարակ մարդկանց, այլև՝ առաքյալներին: Այդ հիվանդությունը Պողոս Առաքյալին տրվել է որպես հակակշիռ Տիրոջ տված բազում շնորհների: Նշվում է նաև պատճառը. ըրպեսզի չգոռոզանա եւ հանկարծ կարծի, թե իր ունեցածն իրենն է եւ ոչ թե Աստծո տվածը: Ուշագրավ է, որ առաքյալը իր ցավը կոչում է «մարմնի խայթ, սատանայի մի պատգամավոր»: Այն ամեն անգամ «բռնցքահարում է» եւ գերծ է պահում գոռոզանալուց: Խիստ որոշակի է նաև, որ այդ «մարմնի խայթը» տրված է Առաքյալի օգուտի համար «որովհետեւ իմ զորությունը տկարության մեջ է ամբողջական դառնում»: Բացատրությունների այս շարքից հետո Պողոս Առաքյալը յուրահատուկ դեղատոմս է համարում իր «տկարություններով պարծենալը», որպեսզի իր մեջ «բնակվի Քրիստոսի զորությունը»:

Այս բոլորով հանդերձ չփորձենք մարդկային կարճամտությամբ հավակնել լիարժեք պատասխանը տալ այն հարցի, թե որն է հիվանդության պատճառը: Կարող են լինել հիվանդության մեզ համար տեսանելի ու հասկանալի պատճառներ, բայց նաև այնպիսիք, որոնք վեր են մեր բանականության սահմաններից: Ուստի չփորձենք մեր մտքի մեջ հիվանդ կամ տկար եղբորը մեղադրել: Պատահական չէ, որ Հովհաննես Սանդուղքն ասում է. «Երբ Քրիստոսի զինվորներից մեկին մարմնապես տկար կամ հիվանդ տեսնենք, կեղծավորաբար չփորձենք մեզ համար պարզել նրա հիվանդության պատճառը: Ավելի լավ է նրան ընդունենք սիրով եւ առանց նրա մասին չար բան մտածելու: Եվ փորձենք բուժել նրան, ինչպես ինքներս մեզ կամ ինչպես մարտադաշտում վիրավորված զինվորին»: Անդրադառնալով հիվանդության պատճառներին նույն սուրբը շարունակում է. «Երբեմն հիվանդությունն ուղարկվում է մեղքը քավելու համար, իսկ երբեմն էլ հպարտությունը խոնարհեցնելու համար մեր բարեգութ Տերն եւ Աստված, տեսնելով, որ որեւէ մեկը ծույլ է ճգնությունների մեջ, նրա մարմինը խոնարհեցնում է հիվանդությամբ, նրան այն տալով որպես ուրախալի ճգնություն: Իսկ երբեմն էլ հոգին մաքրում է խարդախ մտքերից ու կրքերից»: /Ճձձձձձձձձ յծծծ ձձձձ Էթթթթ, թթթթթթ Նեթեթեթե թթթ, Էթթթթթթ ձ ծծծծծծ յծծծծծծ ձ ձձձձձձձ ձ ձձձձձձձձ յծծծ ձձձձձձձձ յծծծ ձձձձձձձ, Ն.՝Թթթթթթթթթ, 1996թ., թթթթ 26-թթ, թթթ. 53-56./:

Դատելով վերը բերված հատվածից կարող ենք ասել, որ Հովհաննես Սանդուղքը գտնում է, որ հիվանդությունը կարող է տրված լինել.

ա/ մեղքերը քավելու համար

բ/ որպես ճգնություն

գ/ հպարտությունը խոնարհեցնելու համար

դ/ հոգին խարդախ կրքերից ու մտքերից մաքրելու միջոց:

Որոշակի է սակայն, որ Աստված երբեք հիվանդությամբ չի փորձում մարդուն: Որեւէ մեկին հիվանդություն ուղարկելիս Տերն անպայման մտածում է հիվանդի օգուտի մասին, ցանկանալով նրան բերել ճշմարիտ ճանապարհի, մեղքերից սրբել կամ իրագործել միայն Իրեն հայտնի մի այլ ծրագիր: Ահա այս է պատճառը, որ Հակոբոս Առաքյալն իր Ընդհանրական թղթում ասում է. «Ոչ ոք երբ փորձության մեջ լինի, թող չասի, «Աստծուց եմ փորձում», քանի որ Աստված չարից չի փորձում եւ Ինքն էլ չի փորձում ոչ ոքի: Յուրաքանչյուր ոք փորձվում է՝ հրապուրվելով եւ խաբվելով իր ցանկություններից: Այնուհետեւ ցանկությունը հղանալով մեղք է ծնում, եւ մեղքը, հասունանալով, մահ է ծնում» /Հակոբոս 1. 13-15/: Հիվանդությունները, փորձություններն աշխատարակ մարդուն տրվում են ոչ թե պատժելու, այլ խրատելու համար:

«Արդ՝ որովհետեւ Աստված իբրեւ որդիների է մոտենում մեզ՝ խրատելու, երբեմն մեր առջեւ, իբրեւ ծառայի, մեր անասունին է հարվածում, երբեմն՝ սարերին ու այգիներին, որպեսզի դրանց նայելով՝ Աստծու երկյուղին ենթարկվենք: Իսկ եթե դրանով էլ չենք խրատվում, հենց մեզ է տանջանքներ տալիս՝ կան ցավերով, եւ կան խեղումներով, եւ կան դեւերով»: Ուշագրավ է, որ Եզնիկ Կողբացին հատուկ շեշտում է անմեղների

տանջանքները եւ որպէս դրա պատճառ նշում է հետեւյալը. «Որպէսզի ուրիշները մտքներում պահեն իմաստունի խոսքը, որ ասում է. «Եթէ արդարը հազիվ է ապրում, ապա ո՞ւր կմնան չարն ու մեղավորը» /Առակ. ԺԱ, 31, այլեւ Ա. Պետր. Դ. 18/: Եվ սա նրա համար է լինում, որ արդարն արդարությունից չթուլանա, իսկ մեղավորն էլ միշտ մեղքի մեջ չմնա /ընդգծ. մերն է.- Հ. Բ./: Եվ Աստված դրա համար պատասխանատու չէ, այլ մարդկանց չարիքներն են Աստծուն մղում այդպիսի տանջանքներով խրատելու մարդկանց»: /Եզնիկ, էջ 69/:

«Թեեւ ցավերն անեծքով մտան աշխարհ,- մի այլ առիթով նշում է Եզնիկ Կողբացին,- սակայն կան նաեւ ուրիշ պատճառներ: Երբեմն մեղքն է լինում պատճառը», երբեմն էլ ծնողների մեղքը կամ ցավ ու հիվանդություն է պատահում, որպէսզի դրանով Աստված փառավորվի: /Եզնիկ, էջ 65/: Սակայն նա բերում է նաեւ հիվանդության նյութական պատճառներ: Նրա կարծիքով հիվանդության պատճառ կարող է լինել «այլ բաղադրիչ նյութերի անհամամասնությունը»: «Որովհետեւ մարդու մարմինը բաղկացած է չորս տարրերից՝ խոնավությունից, չորությունից, ցրտությունից եւ տաքությունից, երբ /դրանցից/ որեւէ մեկը պակասում կամ ավելանում է, մարմնի մեջ ցավ է առաջանում: Իսկ դա կամ շատ ուտելուց ու խմելուց է լինում, կամ չափազանց քչակերությունից, կամ կերակուրների մեջ խտրություն չդնելուց, կամ սաստիկ շոգին աշխատելուց, կամ խիստ ցրտից նեղվելուց, կամ ուրիշ այնպիսի հակառակ բաներից, որոնցով մարմնում խանգարումներ են առաջ գալիս: /Եզնիկ, էջ 67/:

Եթէ ուշադիր քննենք Եզնիկի նշած պատճառները, ապա կտեսնենք, որ դրանց մեծ մասը դարձյալ հետեւանք է մեղքի, այնպէս, ինչպէս որ նրա կարծիքով «դիվահարությունն էլ մարդկանց ամբարտավանության պատճառով է լինում» /Եզնիկ, նույն տեղում/:

Հիվանդության պատճառների մասին նույն կերպ է դատում արքա Դորոթեոսը, ասելով. «Երբ մարդն ապրում է անկարգ եւ անկազմակերպ եւ չի պահպանում իր առողջությունը, ապա առաջանում է ավելորդություն կամ ինչ որ բանի պակասություն, եւ դրանից մարդը հետո դառնում է հիվանդ»: /Արքա Դորոթեոս, էջ 144/: Իսկ մի այլ տեղում շարունակում է. «Սակայն մարմնավոր հիվանդությունների պատճառները տարբեր են լինում. կամ բժիշկն է անփորձ լինում եւ մի դեղի փոխարեն մի ուրիշն է տալիս, կամ հիվանդն է իրեն անկարգ պահում եւ չի կատարում բժշկի նշանակումները»: /Արքա Դորոթեոս, էջ 151/:

Ըստ Հովհաննէս Սանդուղքի մեզ հետ կատարվող երեսելի կամ աներեսույթ ամեն ինչին կարելի է վերաբերվել երեք կերպ, ամեն ինչ ընդունել՝ երեք տեսակի վերաբերմունք ցույց տալով դրան.

- 1/ Ինչպէս հարկն է
- 2/ Կողմնակալությամբ
- 3/ Դրանց միջինով

Այսինքն եղբայրներից մեկը միեւնույն ցավը կարող է ընդունել զայրույթով, երկրորդը՝ տխրությամբ, իսկ երրորդը՝ մեծագույն ուրախությամբ եւ հոժարությամբ: /Նշվ. աշխ. 26, էջ 56/:

Եկեղեցու հայրերից ու սուրբերից շատերը գտնում են, որ մարմնի ցավը մարդուն տրվում է հոգու բժշկության համար: Այդ է պատճառը, որ նրանցից շատերը ուրախությամբ են տարել նեղություններն ու հիվանդությունները, քանի որ Քրիստոսի հետեւորդը չի կարող հալածանքների, նեղությունների ու տառապանքների չենթարկվել, եւ ապա՝ ամեն նեղություն, տառապանք ու հալածանք չի կարող չընդունել որպէս քավություն մեղքերի, որպէս խրատ: Միով բանիվ՝ որպէս հոգու դեղ ու դարման: Ահա հենց այս նկատառումներից ելնելով է, որ Հակոբոս առաքյալն ասում է. «Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության. որովհետեւ, եթէ փորձության մեջ հաստատ լինի, կստանա կյանքի պսակը, որը Տերը խոստացավ Իրեն սիրողներին» /Հակ. 1, 12/:

«Քեզ հրամայեց օրվա հացդ /ճակատի/ քրտինքով ուտել, իսկ դու ուզում ես հավիտենական կյանքը քնով ստանալ: Քո կյանքի համար յոթանասուն տարի է սահմանված, այն էլ ցավով ու հեծեծանքով. /մինչդեռ/ դու ուզում ես հազարամյա ժամանակը առանց ցավի ժառանգել», - ասում է Եզնիկ Կողբացին: /Եզնիկ, էջ 253/:

Հիվանդ մարդն, ի տարբերություն առողջների, բազում արգելքների է հանդիպում. սննդի, աշխատանքի, տանից դուրս գալու կամ ազատ տեղաշարժվելու եւ շատ այլ հարցերում: Եթե այդ ամենն ընդունես որպես Տիրոջ կամքը եւ հնազանդվես առանց տրտունջի եւ փնթփնթալու, ապա քեզ վրա կկատարվեն Նախախնամության նկատառումները: Իսկ դրանք միշտ եւ բոլոր պարագաներում բարի են: Ահա թե ինչու է աբբա Դորոթեոսը հորդորում. «Աղաչում եմ քեզ, որոյակ իմ, համբերիր եւ գոհացիր այն արգելքների համար, որ պատահում են քեզ հիվանդության ժամանակ ըստ ասված խոսքի «Ինչ էլ որ գա քո գլխին, ընդունիր հոժարությամբ» /Սիր. 2. 4/, որպեսզի Նախախնամության նկատառումները կատարվեն քեզ վրա, որոյակ իմ, այնպես, ինչպես որ Նրան է հաճելի»: /Աբբա Դորոթեոս, էջ 237/: Պատահական չի ասված. «Այն հոգիները, որոնց զանազան վշտեր են պատել կամ բացահայտ կերպով մարդկանց կողմից հասցված, կամ առաջացել են տխմար մտքերի, կամ մարմնական ցավերի պատճառով, եթե հաստատակամորեն մինչեւ վերջ համբերեն, կարժանանան նույնպիսի պսակի, ինչպիսին տառապայվերիին է»: /Èâðïïáð Æâêêâé /Ëóçíáðîâ/ “Þðïãñðâï è ñðïëïé-âñðâï”, Ñ-ÏÁ 1913ã., ñðð. 132/:

Եթե պարզունակ տրամաբանությամբ առաջնորդվելու լինենք, ապա պիտի մտածենք. եթե Աստված որեւէ մեկին որպես իր մեղքերի պատիժ թույլ է տվել, որ հիվանդանա, ուրեմն էլ ի՞նչ կարիք կա նրան խղճալու եւ մխիթարելու: Եթե Տերն է այդպես ցանկանում, ապա մենք՝ մահկանացուներս ի՞նչ կարող ենք անել: Սակայն արի ու տես, որ այդպես չէ: Դարձյալ ու կրկին պիտի մեջ բերենք աբբա Դորոթեոսի խոսքը, որն ասում է. «Նմանապես Աստված թույլ է տալիս, որ ինչ որ մեկը գտնվի տրտմության եւ հիվանդության մեջ, սակայն թեեւ Աստծո կամքն է այդպիսին, որ նա տրտմի, սակայն Աստված չի ուզում, որ մենք էլ տրտմեցնենք նրան կամ որպեսզի ասենք. «Քանի որ Աստված է թույլ տվել, որ նա հիվանդ լինի, ապա չպետք է խղճանք նրան»: Աստված այդ բանը չի ուզում. չի ուզում, որպեսզի մենք նման ձեռով ծառայենք Իր կամքին: Նա ցանկանում է, ընդհակառակն, մեզ տեսնել այնքան բարի, որ մենք չկամենանք այն, ինչ որ Նա անում է ըստ Իր թույլատու կամքի»: /Աբբա Դորոթեոս, էջ 194/:

Փաստորեն «Փորձությունների հնոցը վառված է ոչ թե ոչնչացնելու, այլ բարոյապես մաքրելու, Աստծո կամքին հնազանդեցնելու եւ այն բանի համար, որպեսզի ցույց տրվի առ Աստված ունեցած սերը եւ երկրի վրա Աստծո անուրը փառավորվի»: /Èâðïïáð Æâêêâé /Ëóçíáðîâ/ “Þðïãñðâï è ñðïëïé-âñðâï”, Ñ-ÏÁ 1913ã., ñðð. 130/:

Մարդ-արարածն իր յուրաքանչյուր մեղքի համար պետք է փոխհատույց լինի կամ այս կյանքի ընթացքում, կամ հանդերձյալ: Աստծո սահմանած օրենքից յուրաքանչյուր շեղում փոխհատուցում է պահանջում, եւ եթե չլիներ Տիրոջ անսահման ողորմածությունը, անհնարին կլիներ մարդու փրկությունը: Հենց այդ ողորմածության արդյունք պետք է համարել եւ այն, որ Տերը մեզ մեր մեղքերի համար պատժում է այստեղ, այս կյանքում: Եթե հաշվի առնենք, որ երկրավոր կյանքը հավերժի հետ համեմատած մեկ վայրկյանից էլ պակաս է, ուրեմն այս կյանքում տառապելը, փորձությունների ենթարկվելը, հիվանդանալը դարձյալ Տիրոջ ողորմածության արտահայտությունն է: Ավելի լավ է մարդը տառապի այստեղ, քան հավիտենական կյանքում: «Օրհնված են իրենց մեղքերի համար տառապող մարդիկ, քանի որ նրանք դրանց համար փոխհատուցում են այս կյանքում», - ասում է Պաիսի Ծերը /Պաիսի Սուրբսարեցի, էջ 98/:

Մենք հաճախ մոռանում ենք մահվան եւ հավերժական կյանքի գոյության մասին, ինչպես հարկն է գնահատել չենք կարողանում հավիտենական կյանքը, դրա համար էլ ներկան ու ապագան կշռելիս գերազանահատում ենք առաջինը: Դրա համար էլ ինչպես հարկն է չենք պատրաստվում ապագային, այնինչ մեզ համար

ամենաօգտակար բանը կլիներ հավերժական կյանքին պատրաստվելը: /Օթեմն չաձծաճաճաճ յեծա, ռիճծաձեծաձեծ  
 ածծեյաճաձեծ յաճծաձեծ, Էթա-2001թ., թծծ. 74/:

Հայրերն ասում են՝ հիվանդ մարդը ինչ որ չափով Աստուծոց հեռացած կամ ինչ որ ծեղով ճշմարիտ  
 ճանապարհից շեղված մարդն է: Եվ առողջանալու համար առաջին հերթին պետք է ապաշխարել, խոստովանել  
 մեղքերը: Այստեղ, ինչպես եւ ամենուր, անչափ կարեւոր է հավատը: Պատահական չէ, որ երբ մարդիկ մոտենում  
 էին Քրիստոսին Նրանից մարմնական ապաքինում ակնկալելով, Հիսուս նրանց ասում էր. «Քո մեղքերը քեզ  
 ներված են» /Մատթ. 9, 2/: Կամ, որ նույնն է. «Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» /Մատթ. 9, 29/:

Բայց պատահում է, որ հիվանդն ինքը չի իմանում, թե իր որ մեղքն է դարձել իր հիվանդության պատճառը: Այս  
 դեպքում, թերեւս, շատ կարեւոր է լուրջ եւ ուշադիր ինքնաքննությունը, ինքնախոստովանությունը, որին պիտի  
 հետեւի խոստովանությունը հոգեւորականին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ավետարանում եւ Գործքում նշվում է բժշկության 29 դեպք: Դրանցից  
 23-ը կատարում է Հիսուսն ինքը, իսկ 6-ը կատարվում է Առաքյալների ձեռքով: Հիսուսի կողմից բժշկելու 12  
 դեպք նշվում է Մատթեոսի, 13 դեպք՝ Մարկոսի, 14-ը՝ Ղուկասի, միայն 4-ը՝ Հովհաննեսի ավետարաններում եւ 6  
 դեպք՝ Գործք Առաքելոցում:

Ասեմք, որ ավետարանիչները հիմնականում կրկնում են բուժման նկարագրությունները, սակայն, ընդհանուր  
 առմամբ, 9 դեպք հիշատակվում է ավետարանիչներից միայն մեկի մոտ: Դրանք են.

1. Երկու կույրերի եւ համրի բժշկումը /Մատթ. 9. 27-34/:
2. Այրի կնոջ որդու հարությունը /Ղուկ. 7. 11-17/:
3. Կուչ եկած կնոջ բժշկումը շաբաթ օրով /Ղուկ. 13. 10-17/:
4. Ջրգողով հիվանդի բժշկումը շաբաթ օրով /Ղուկ. 14. 1-5/:
5. Տասը բորոտների մաքրվելը /Ղուկ. 17. 11-19/:
6. Բարձրաստիճան պաշտոնյայի որդու բժշկումը /Հովհ. 4. 43-54/:
7. Ոչխարների ավագանի անդամալույծի բժշկումը /Հովհ. 5. 1-15/:
8. Ի ծնե կույրի բժշկումը /Հովհ. 9. 1-34/:
9. Ղազարոսի հարությունը /Հովհ. 11. 1-46/:

## ԲԺՇԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐՆ ԸՍՏ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՔ ԱՈՒՔԵԼՈՑԻ

	ՄԱՏԹԵՈՍ	ՄԱՐԿՈՍ	ՂՈՒԿԱՍ	ՀՈՎՀԱՆՆԵՍ	ԳՈՐԾՔ
	Բորոտի բժշկություն ը /8. 1-4/	/1. 40-45/	/5. 12-16/	_____	_____
	Հարյուրապ ետի ծառայի բժշկումը	_____	/7. 1-10/	_____	_____

	—				
	Բժշկումներ Կափառնայ ունում /8. 14-22/	/1. 29-34/	/4. 38-40, 9. 57-62/	—	—
	Գերգեսիաց ի դիվահարի բժշկումը /8. 28-34/	/5. 1-20/	/8. 26-39/	—	—
	Անդամալույ ծի բժշկումը /9. 1-8/	/2. 1-12/	/5. 17-26/	—	—
	Հայրոսի աղջկա հարությունը —	/5. 21-43/	/8. 40-56/	—	—
	Երկու կույրերի եւ համրի բժշկումը /9. 27-34/	—	—	—	—
	Չորացած ծեռքի բժշկումը /12. 9-14/	/3. 1-6/	/6. 6-11/	—	—
	Բժշկումներ Գեննեսարե թում /14. 34-36/	/6. 53-56/	—	—	—
	Քանանացի կնոջ հավատը /15. 21-28/	/7. 24-30/	—	—	—
	Լուսնոտ երեխայի բժշկումը /17. 14-20/	/9. 13-28/	/9. 37-44/	—	—
	Երիբովի երկու	/10. 46-52/	/18. 35-43/	—	—

	կույրերի բժշկումը /20. 29-34/				
	—	Ղիվահարի բժշկումը /1. 21-28/	/4. 31-37/	—	—
	—	Խուլ-համրի բժշկումը /7. 31-37/	—	—	—
	—	Բեթսայիդայ ի կույրի բժշկումը /8. 22-26/	—	—	—
	—	—	Այրի կնոջ որդու հարություն ը /7. 11-17/	—	—
	—	—	Կուչ եկած կնոջ բժշկումը շաբաթ օրով /13. 10-17/	—	—
	—	—	Ջրգողով հիվանդի բժշկումը շաբաթ օրով /14. 1-5/	—	—
	—	—	Տասը բորոտներ ի մաքրվելը /17. 11-19/	—	—
	—	—	—	Բարձրաստ իճան պաշտոնա տարի որդու	—

				բժշկումը /4. 43-54/	
	—	—	—	Ոչխարների ավազանի անդամալույ ծի բժշկումը	—
	—	—	—	Ի ծնե կույրի բժշկումը /9. 1-34/	—
	—	—	—	Ղազարոսի հարությունը	—
	—	—	—	—	Ի ծնե կաղի բժշկումը /3. 4-7/
	—	—	—	—	Անդամալ ույծի բժշկումը Լյուդիայու մ /9. 32-35/
	—	—	—	—	Այծեմնիկ ի հառնումը /9. 36-41/
	—	—	—	—	Ի ծնե կաղի բժշկումը Լյուստրայ ում /14. 7-9/
	—	—	—	—	Եվտիքոս ի հառնումը /20. 9-12/
	—	—	—	—	Բազում նշանների ել

					զարման ալի գործեր /5. 15/
--	--	--	--	--	------------------------------------

Հիսուս Քրիստոսը եւ առաքյալները բժշկվողից նախ եւ առաջ հավատ էին պահանջում եւ նախքան բժշկելը մեղքերի թողություն տալիս: Սակայն վերը բերված աղյուսակում նշված բժշկության դեպքերը մենք դիտարկել ենք մի այլ տեսանկյունից:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս հիմնականում բժշկում էր խոսքով կամ հիվանդի վրա ձեռք դնելով: Նաեւ՝ երբ հիվանդ, բայց հավատավոր մարդը դիպչում էր նրա զգեստի քղանցքին եւ այլն: Ավետարաններում եւ Գործքում մենք հաշվել ենք 17 դեպք, երբ բժշկումը կատարվում է խոսքով:

Դրանք հետեւյալներն են.

1. Դիվահարի բժշկումը /Մարկ. 1. 21-28, Ղուկ. 4. 31-37/:
2. Բորոտի բժշկությունը /Մատթ. 8. 1-4, Մարկ. 1. 40-45, Ղուկ. 5. 12-16/:
3. Հարյուրապետի ծառայի բժշկումը /Մատթ. 8. 5-13, Ղուկ. 7. 1-10/:
4. Բժշկություններ Կափառնայում /Մատթ. 14. 16, Մարկ. 1. 32-34/:
5. Գերգեսիացի դիվահարի բժշկությունը /Մատթ. 8. 28-34, Մարկ. 5. 1-20, Ղուկ. 8. 26-39/:
6. Անդամալուծի բժշկումը /Մատթ. 9. 1-8, Մարկ. 2.1-12, Ղուկ. 5. 17-26/:
7. Չորացած ձեռքի բժշկումը /Մատթ. 12. 9-14, Մարկ. 3. 1-6, Ղուկ. 6. 6-11/:
8. Քանանացի կնոջ հավատը /Մատթ. 15. 21-31, Մարկ. 7. 24-30/:
9. Լուսնոտ երեխայի բժշկումը /Մատթ. 17. 14-20, Մարկ. 9. 13-28, Ղուկ. 9. 37-44/ : /Հիսուս դիվահար երեխային բուժում է նրա մեջ եղած դեւին սաստելով եւ աշակերտների հարցմանը պատասխանում է. «Բայց այս տեսակ դեւը այլ կերպ դուրս չի ելնում, եթե ոչ աղոթքով ու ծոմապահությամբ/ /Մատթ. 17-20/:
10. Այրի կնոջ որդու հարությունը /Ղուկ. 7.11-17/:
11. Տասը բորոտների մաքրվելը /Ղուկ. 11-19/:
12. Բարձրաստիճան պաշտոնատարի որդու բժշկումը /Հովհ. 4. 43-54/:
13. Ոչխարների ավազանի անդամալուծի բժշկումը /Հովհ. 5. 1-15/:
14. Ի ծնե կաղի բժշկումը /Գործք 3. 4-7/ : /խոսքով ասելուց բացի նաեւ բռնում է հիվանդի ձեռքը/:
15. Անդամալուծի բժշկումը Լյուդիայում /Գործք 9. 32-35/:
16. Այծեմնիկի հառնումը /Գործք 9. 36-41/:
17. Ի ծնե կաղի բժշկումը Լյուստրայում /Գործք 14. 7-9/:

Յոթ դեպքերում էլ բժշկությունը կատարվում է հիվանդի վրա ձեռք դնելով կամ երբ հիվանդները կաչում են Հիսուսի հագուստի քղանցքին:

1. Պետրոսի զոքանչի բժշկումը /Մատթ. 8. 14-15, Մարկ. 1. 29-34/ : /Ըստ Ղուկասի Պետրոսի զոքանչի բժշկումը կատարվում է խոսքով : /Ղուկ. 4. 38-40//:
2. Տեռատես կնոջ բժշկումը եւ Հայրոսի աղջկա հարությունը /Մատթ. 9. 18-26, Մարկ. 5. 21-43, Ղուկ. 8. 40-56/:
3. Երկու կույրերի բժշկումը /Մատթ. 9. 27-30/ : /Այդ նույն գլխում խոսվում է նաեւ դիվահարի բժշկության մասին, բայց խոսք չի գնում բժշկության ձեւի մասին/:
4. Բժշկություններ Գեննեսարեթում /Հիվանդները բուժվում են Հիսուսի զգեստի քղանցքին դիպչելով /Մատթ. 14. 34-36, Մարկ. 6. 53-56//:



5. Երիբուլի երկու կույրերի բժշկումը /Մատթ. 20. 29-34, Մարկ. 10. 46-52, Ղուկ. 18. 35-43/:
6. Կուչ եկած կնոջ բժշկումը շաբաթ օրով /Ղուկ. 13. 10-17/:
7. Եվտիքոսի հառնումը /Գործք. 20. 9-12/:

Բացի սրանցից Ավետարանը պատմում է նաև բժշկության զանազան այլ եղանակների մասին:

Դրանք են.

1. Խուկ-համրի բժշկումը.

«Մատները դրեց ականջների մեջ եւ այնտեղ թեց, ապա բռնեց նրա լեզվից, դեպի երկինք նայեց, հոգոց հանեց եւ ասաց՝ Եփփաթա, որ նշանակում է բացվիր» /Մարկ. 7. 31-37/:

2. Կույրի բժշկումը.

«Նրա աչքերը թքով թրջեց եւ ձեռքը նրա վրա դրեց եւ հարցնում է կույրին, թե տեսնո՞ւմ է: Նա բացեց աչքերը եւ ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ շրջում են ինչպես ծառեր»: Նա կրկին ձեռքը դրեց նրա աչքերի վրա. կույրը իր աչքերը բացեց եւ տեսնում էր»: /Մարկ. 8. 23-25/:

3. Ջրգողով հիվանդի բժշկումը շաբաթ օրով.

Այս բժշկության մասին ասվում է միայն. «Հիսուս նրան բռնելով բուժեց եւ արձակեց» /Ղուկ. 14. 1-6/:

4. Ի ծնե կույրի բժշկումը.

Երբ այս ասաց, թեց գետնին եւ թքով կավ շինեց եւ կավը ծեփեց կույրի աչքերի վրա եւ ասաց նրան. «Գնա, լվացվիր Սիլովամի ավազանի մեջ /Որ թարգմանվում է առաքված/: Գնաց, լվացվեց, եկավ, եւ տեսնում էր» /Հովհ. 9. 6-8/:

5. Բազում նշաններ եւ զարմանալի գործեր.

«... Հիվանդներին հանում էին հրապարակները եւ դնում պատգարակներով ու մահիճներով, որպեսզի Պետրոսի անցնելու ժամանակ գոնե նրա ստվերը հասնի նրանցից մեկին» /Գործք. 5. 15/:

\*\*\*

Վերը նշված բոլոր դեպքերում էլ գլխավորը հավատն է: Առանց հավատի չեն կատարվում հրաշալի այս բժշկությունները: Առաջին հերթին Հիսուս մեղավոր աղանորդիներից հավատ է պահանջում սատանայի գործերը քանդելու համար:

«Որոյակներ, թող ոչ ոք ձեզ չխաբի. ով արդարություն է անում, արդար է, ինչպես Նա է արդար: Եվ ով մեղք է գործում, այդ՝ սատանայից է, քանի որ սատանան մեղանչող է ի սկզբանե: Աստծու որդին հենց նրա համար հայտնվեց, որ քանդի սատանայի գործերը» /Հովհ. 3. 7-8/:

Ամուր հավատն առ Աստված, բոլոր դեպքերում Աստծուն ապավինելը ծնում են եւ հույս, եւ համբերություն: Հենց այդ համբերությունը, ամուր հավատքն ու վստահությունն էին, որոնք Օստիացի Հոբին հնարավորություն տվեցին փորձության մեջ չմեղանչել եւ դիմագրավել բոլոր տառապանքներին: Նա, որ կորցրեց իր յոթը տղաներին ու երեք աղջիկներին, իր հոտի յոթ հազար ոչխարներին, երեք հազար ուղտերին եւ բազում այլ հարստություններ, իսկ ինքը հիվանդացավ անտանելի հիվանդությամբ, երբեք չկորցրեց հույսը: Նա «պատառուտեց հագուստները, կտրեց իր գլխի մազերը եւ գետին փռվելով՝ երկրպագեց Տիրոջն ու ասաց. «Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, տերն էլ հետ առավ: Ինչպես որ հաճելի էր Տիրոջը, այնպես էլ եղավ: Թող օրինյալ լինի Տիրոջ անունը»: Եվ նրան պատահած այս բոլոր դեպքերի ժամանակ Հոբը չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն հանդես բերեց Աստծո հանդեպ» /Հոբ. 1. 20-23/:

Հոբի օրինակը շատ խոսում է, յուրատեսակ մի դաս, որ ցույց է տալիս, թե հավատացյալն իրեն ինչպես պահի փորձության ժամանակ, թե ինչպես ամեն ինչում եւ բոլոր պարագաներում հույսը դնի Տիրոջ վրա, որը Իրեն

հավատացողներին երբեք չի թողնում: Հակոբոս Առաքյալը խորհուրդ է տալիս. «Հիվա՞նդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, եւ նրանք նրա վրա թող աղոթք ասեն, թող յուղով օծեն Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, Տերը նրան ուղքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի: Ձեր մեղքերը միմյանց խոստովանեցեք եւ միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք, քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է» /Հակ. 5. 14-16/:

Ինչպես տեսնում ենք, հիվանդին օգնում է ոչ թե յուղը, այլ հավատը, աղոթքը, ձեռք դնելը եւ Տիրոջ անվան գործությունը: /Աղոթագիրք ՎԷՄ, Երեսան 2000, էջ 466/:

Մի այլ առիթով Հակոբոս Առաքյալը հիվանդներին կարգադրում է. «Եթե քո մարմնի որեւէ մասը հիվանդ է, հաստատապես հավատա Սաբաովթին կամ այլ անուններով հայտնի Տիրոջը, որոնք Սրբազան Գրքերը հատկանշում են իր էությանը համապատասխան, եւ Նա բժշկություն կլինի քո հիվանդությանը: Նույնիսկ այն դեպքում, երբ դու այս խոսքերն ասես ինքդ քեզ վրա, դու ավելին կլինես, քան հեթանոսները, քանզի դու փառաբանում ես Աստծուն եւ ոչ թե անմաքուր հոգիներին»: /Տես Բագրատ արքեղա Գալստանյան, Օծումն հիվանդաց, խորհրդի խնդիրը հայ եկեղեցում /պատմությունը, գործադրությունը, վարդապետությունը/ Վարդապետական թեզ ձեռագիր, էջ 16/:

Ով հավատում է Հիսուսին, նրա սիրտը սլանում է դեպի անտեսանելին ու անկորնչելին: /Թ. Գեմբացի, նշվ. աշխ. էջ 52/: Սուրբ հայրերը լավ էին հասկանում սաղմոսի հետեւյալ տողը. «Մենք անցանք հրի ու ջրի միջով, բայց Դու մեզ անդորր տվիր» /Սաղմ. 65. 12/:

Այո, մարդկային մարմինը տկար է: Եվ հաճախ այդ տկարությունն ավելանում է, երբ մարդուն պատում են հիվանդությունները:

Անշուշտ, հիվանդության ժամանակ պետք է բժշկի դիմել, բայց հարկավոր չէ խուճապի մատնվել, եւ պետք է հույսը դնել Տիրոջ վրա: Վախը, խուճապը, առավել եւս՝ հուսահատությունը, վատ խորհրդատուներ են նման դեպքում: Դիաղոխ Երանելին ասում է. «Հիվանդությունների ժամանակ ոչինչ չի արգելում բժիշկ հրավիրել: Աստված կանխատեսել է, որ բժշկական արվեստի անհրաժեշտություն կլինի եւ բարեհաճել է, որ նա ստեղծվի մարդկային փորձի հիման վրա, դրա համար էլ նախապես ստեղծագործության հետ միասին գոյության իրավունք տվեց նաեւ բժշկությանը: Սակայն հույսը ոչ թե բժիշկների վրա պիտի դնել, այլ մեր իսկական Բժշկի ու Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի»: /*Āiāđōiōēpāēā, ēçāđāiīfā äëy iēđyī, l. 2002, řđđ.120-121/:*

Քանի որ բժշկությունն աստվածահաճո գործ է, հենց իրենք՝ բժիշկներն էլ չեն կարող բուժել առանց Տիրոջ կամքի: Դրա համար էլ. «Կարողալով բժշկական գրքեր, կամ էլ հարցնելով նրանց մասին որեւէ մեկին, մի մոռացիր, որ առանց Աստծո ոչ ոք բժշկություն չի ստանում: Արդ, ով իրեն նվիրում է բժշկության արվեստին, նա պետք է իրեն հանձնի Աստծո անվանը, եւ Աստված կօգնի նրան: Բժշկության արվեստը չի խանգարում մարդուն բարեպաշտ լինելու»: /Աբբա Դորոթեոս, էջ 294/:

Նեղոս Սինայեցին էլ խորհուրդ է տալիս. «Հիվանդությունների ժամանակ բժիշկներին ու դեղերին դիմելուց առաջ աղոթիր»: /*Āiāđōiōēpāēā, ēçāđāiīfā äëy iēđyī, l. 2002, řđđ.122/:*

Մեծ ճգնաժողովները նույնիսկ ուրախացել են, երբ նրանց հիվանդություն կամ որեւէ նեղություն է պատահել: Նշանակում է Տերը չի մոռացել իրենց եւ մեղքերը քավելու համար թույլ է տալիս, որ այս աշխարհում ցավեր ու փորձություններ պատահեն: Քանզի «եթե մարմինդ բռնությամբ չճնշես, չես կարող հաղթել մոլություններին: ... Բայց քանի որ մեղքով կորստյան մատնեցինք մեր անմեղությունը, կորստյան մատնեցինք նաեւ մեր իսկական երջանկությունը: Հարկ է ուրեմն, համբերությամբ սպասել Աստծո ողորմությանը, մինչեւ որ «անցնի անօրեներությունը եւ այս մահկանացու վիճակն ընկղմվի անանց կյանքի մեջ» /Բ. Կարնթ. 5.4./: /Թ. Գեմբացի, նշվ. աշխ. էջ 52/:

Այո, Աստված մարդուն ստեղծել է առողջ, իսկ հիվանդությունները անցյալ, ներկա եւ ապագա մեղքերի համար են տրվում: Կամ որպես մեղքի քավություն, կամ գալիք մեղքերից ետ պահելու զսպաշապիկ: Այսքանով հանդերձ, բժշկությունը միշտ էլ հարգանքի արժանի է եղել: Մեր Տերն Ինքն էր բժշկում բազում հիվանդների, Նրա օրինակին էին հետեւում Նրա աշակերտները եւ հետեւորդները:

Մարդը հոգու եւ մարմնի ամբողջությունն է, բայց հոգի-մարմին հարաբերակցության մեջ հոգեւոր մարդու համար առաջնայինը հոգին է: «Մեր մեղսալի կրքերի եւ նրանց հետեւանք հանդիսացող հիվանդությունների գերությունից ազատ մարմինն է ծառայելու հոգուն, եւ հոգեւոր ուժերն ու կարողությունները, պայծառակերպվելով Սուրբ Հոգու շնորհով, նախասահմանված են մարդու հավիտենական փրկության եւ աստվածացման համար» /Տ. Բագրատ վրդ. Գալստանյան, Տ. Վահրամ քհն. Մելիքյան «Երբ բոլոր միջոցները սպառվում են...», Քրիստոնյա Հայաստան, 2002, մարտ, թիվ 6/:

Անշուշտ, առողջությունը կարելի է մարդու համար, բայց գերխնդիր չէ, քանզի վաղ, թե ուշ բոլորս հրաժեշտ ենք տալու այս կյանքին: Ուրեմն մարդու համար գերխնդիր պիտի լինի ոչ թե երկարակեցությունը, այլ մաքուր խիղճը, քանզի «եթե խիղճը մաքուր լիներ, մահից չէիր վախենա» /Թ. Գեմբացի, նշվ. աշխ., էջ 54/:

Ինչպես ասացինք վերելում, Աստվածաշունչը եւ հոգեւոր հայրերը սովորեցնում են Տիրոջ կողմից տրված հիվանդությունը նույնպես ընդունել որպես բարիք, աշխատելով այն ծառայեցնել հոգու փրկությանը: Բայց, ավաղ, միշտ չէ, որ մենք բավական համբերատար եւ երկայնամիտ ենք հիվանդության ժամանակ: Եվ սխալված չենք լինի ասելով, որ հաճախ ավելի մեծ մեղքերի մեջ ենք ընկնում տրտնջալով ու դժգոհելով Աստծուց: Այն Աստծուց, որ համակ բարություն է, եւ հիվանդությունն ու նեղությունը ոչ թե Ինքն է տալիս մեզ, այլ մենք ենք ստանում դրանք, որպես հատուցում մեր խոտոր վարքի: Ահա թե ինչու շատերիս համար հիվանդությունը առիթ է դառնում նոր մեղքեր գործելու եւ այդ պատճառով է Թ. Գեմբացին ասում. «Քչերն են իրենց վարքը բարելավում հիվանդությունների ժամանակ» /Թ. Գեմբացի, նշվ. աշխ., էջ 55/:

Ուրեմն հիվանդությունները, նեղությունները, տառապանքները տանենք համբերությամբ, սիրով, եթե կարող ենք, նաեւ՝ ուրախությամբ, դրանք ծառայեցնելով հոգու փրկության անչափ կարեւոր գործին:

Աստծո կողմից մարդուն տրված ամենամեծ պարգեւը կյանքն է, իսկ հիվանդությունը Տիրոջ խաչի մի փոքր մասն է միայն, աննշան մի բեկորը, որը, ճիշտ է, հաճախ ծանր է թվում, բայց այն անհրաժեշտ է մեզ համար: Անհրաժեշտ այն առումով, որ -ճանապարհ է հարթում դեպի հավիտենություն:

Մեր մեղանչական բնությունը մաքրելու լավագույն միջոցը մեղքերը խոստովանելն է: Աստված ամենագետ է, բայց երբ Ադամը մեղանչեց, Տերը նրան հարցրեց. «Ո՞ւր ես» /Ծննդոց 3.9/։ Այդ հարցի պատճառը ոչ թե այն էր, որ Աստված չգիտեր նրա ուր լինելը, այլ ուզում էր նրա խոստովանությունը լսել: Ահա թե որքան կարեւոր է գիտակցաբար մեղքերն Աստծու առաջ խոստովանելը եւ մաքրվելը, քանզի Նա է մեզ մաքրագործում հոգեւոր եւ մարմնական ցավերից:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ, ՆԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ  
/Հատվածներ Սուրբ Գրքից/

ԵԶԵԿԻԱՅԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՔԻՆՈՒՄԸ

Այն ժամանակ Եզեկիան հիվանդացավ մահացու հիվանդությամբ. Ամոսի որդի Եսային եկավ նրա մոտ ու ասաց. «Այսպես է ասում Տերը. «Պատվեր տուր տանդ համար, որովհետեւ մեռնելու ես, չես ապրելու»:

Եվ Եզեկիան երեսը շրջեց դեպի պատը, աղոթք արեց ու ասաց. «Ով Տեր, հիշիր ինձ, Տեր, քանզի քո առաջ արդարությամբ ու ճշմարիտ սրտով ընթացա եւ քեզ համար հաճելի գործեր կատարեցի»: Ապա մեծ ցավով լաց եղավ Եզեկիան:

Եվ Տերը, խոսքն ուղղելով Եսայուն, ասաց. «Գնա եւ ասա Եզեկիային, թե այսպես է ասում քո հոր՝ Դավթի Տեր Աստվածը. «Լսեցի քո աղոթքի ձայնը եւ տեսա քո արցունքները, ահավասիկ քո կյանքի ժամանակի վրա ավելացնում եմ տասնհինգ տարի» /Եսայի 38. 1-5/:

#### ՕՍԷԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Իրենց նեղությունների մեջ կշտապեն ինձ մոտ եւ կասեն.

«Գնանք եւ վերադառնանք մեր Տեր Աստծուն,  
որովհետեւ Նա հարվածեց մեզ եւ Ինքն էլ կբժշկի,  
վիրավորեց եւ կկասի մեր վերքերը:  
Երկու օր հետո կկենդանացնի մեզ,  
եւ երրորդ օրը կելնենք, կկանգնենք նրա առաջ,  
կճանաչենք Տիրոջը  
եւ հետամուտ կլինենք ճանաչելու նրան:  
Մենք Նրան պատրաստ կգտնենք  
ինչպես առավոտը  
եւ Նա կգա դեպի մեզ՝ ինչպես  
վաղ եւ ուշացած անձրեւը՝ դեպի հողը»:

/Օսէի մարգարեությունը 6. 1-3/:

#### ԱՄՈՍԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Ես ձեր բոլոր քաղաքներում ատամի ցավ պատճառեցի ձեզ  
եւ հացի կարոտ թողեցի ձեր բոլոր բնակավայրերում,  
բայց դուք էլի չդարձաք դեպի ինձ»,- ասում է Տերը:

/Ամոսի մարգարեությունը 4.6/:

#### ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Որովայնս, որովայնս ցավ է ընկել,  
Եվ հեծում են սրտիս զգայարանները:  
Սիրտս ճմլվում է, եւ հոգիս հանգստություն չունի,  
որովհետեւ ես շեփորի ձայն լսեցի  
եւ պատերազմի ու թշվառության գույժ:

/Երեմիա, 4.19/

«Նայիր, Տեր, ես նեղության մեջ եմ,  
ոսկորներս հալումաշ եղան,  
Սիրտս մեջս տրորվեց, դառնացած եմ:  
Դրսից սուրն ինձ անժառանգ դարձրեց,  
ինչպես մահը՝ ներսից:  
Լսեցեք, լսեցեք այս.  
Ես հեծեծում ու հառաչում եմ,  
Եվ ոչ ոք չկա, որ մխիթարի ինձ:

Իմ բոլոր թշնամիներն իմացան  
իմ վրա եկած չարիքի մասին  
Եվ ոտնահարեցին ինձ,  
քանզի դու ստեղծեցիր այդ օրը,  
դու կանչեցիր այդ ժամանակը,  
որ վայր զա ինձ վրա»:

/Երեմիա, 20-21/:

#### ԵԶԵԿԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԻՑ

«Դու էլ, մարդու որդի, ասա Իսրայելի այդ տանը. «Այսպես խոսեցեք ու ասացեք՝ մեր մոլորություններն ու անօրենությունները մեր մեջ են, եւ մենք դրանց մեջ մաշվում ենք, ինչպե՞ս ազատվենք»: Ասա նրանց. «Ամենակալ Տերն ասում է՝ կենդանի եմ ես եւ ամբարիշտի մահը չեմ ուզում, այլ՝ նրա ետ կանգնելն իր չար ճանապարհից ու ապրելը: Դարձեք ետ, դարձեք չար ճանապարհից, ինչո՞ւ մեռնեք, ով տունդ Իսրայելի»:

Դու էլ, մարդու որդի, ասա քո ժողովրդի զավակներին. «Արդարի արդարությունը նրան չի փրկելու այն օրը, երբ մոլորվի, անօրենի անօրենությունն էլ նրան չի չարչարելու այն օրը, երբ ետ կանգնի իր բոլոր անօրենություններից: Արդարը չի կարողանալու ազատվել իր մեղքերի օրը» /Եզեկիել, 33. 10-13/:

#### ԱՌԱԿԱՑ ԳՐՔԻՑ

«Մահը պատահում է խրատ չլսողներին,  
իսկ անզգամը մեռնում է մեղքերի մեջ»: /Առակաց, 23.9/:

#### ԵՍԱՅՈՒ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Մահը գորացավ ու կուլ տվեց,  
Բայց Աստված բոլորի երեսից արցունքն իսպառ պիտի կտրի,  
ժողովրդի նախատինքը պիտի վերացնի ամբողջ աշխարհից,  
քանզի սա Տիրոջ բերանը խոսեց.  
ինչպես ամպի հովանին հաղթահարում է տապը, այնպես էլ Նա պիտի ընկճի հզորների բազուկները:

Ու այն օրը պիտի ասեն.  
«Ահա մեր Տեր Աստվածը, որի վրա  
հույս էինք դրել մենք,  
Նա փրկեց մեզ,  
քանզի Նա է Տերը, որին սպասում էինք.  
Եկեք ցնձանք եւ ուրախանանք մեր փրկությամբ» /Եսայի 25. 8-9/:

#### ՀՈՐԻ ԳՐՔԻՑ

Ապա Հորը վեր կացավ, պատառուտեց իր հագուստները, կտրեց իր գլխի մազերը եւ գետին փռվելով՝  
երկրպագեց Տիրոջն ու ասաց. «Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց,  
Տերն էլ ետ առավ: Ինչպես որ հաճելի է Տիրոջը, այնպես էլ եղավ: Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը»:

Եվ նրան պատահած այս բոլոր դեպքերի ժամանակ Հորը չմեղանչեց Տիրոջ առաջ, ոչ էլ անզգամություն  
հանդես բերեց Աստծու հանդեպ» /Հոր 1. 20-23/:

\*\*\*

«Մի շունչ դիպավ իմ երեսին.  
քստմնեցին մազերս ու մարմինն իմ:  
Կանգնեցի, բայց չհասկացա,

տեսա, բայց կերպարանք չկար աչքերիս առաջ:  
Միայն շունչ ու մի շշմոջյուն էի լսում:  
Մահկանացուն միթե Տիրոջ մոտ ավելի մաքր՞ւր է,  
կամ մի մարդ ավելի անարա՞տ է,  
քան գործերը Նրա,  
եթե չի հավատում իր ծառաներին,  
իսկ հրեշտակների վրա խոստոր բաներ է նկատում:  
Արդ գալով կավե տներում բնակվածներին  
/մենք էլ միեւնոյն կավից ենք/,  
ցեցի պես կերավ նրանց,  
եւ առավոտից մինչեւ երեկո  
նրանք գոյություն չեն ունենա» /Հոր. 4. 15-20/:

\*\*\*

«Տերն է, որ ցավ է պատճառում,  
բայց հետո նորից ամոքում,  
խփում է, բայց Նրա ձեռքն է բժշկում» /Հոր 5.18/:

\*\*\*

«Եթե արդար լինեմ,  
բերանս ինձ ամբարիշտ կդարձնի,  
անարատ լինեմ՝ կամակոր կդառնամ:  
Իսկ եթե հոգով մեղանչել եմ՝ չգիտեմ» /Հոր 9. 20-21/:

\*\*\*

«Կնոջածին մարդն է սակավակյաց  
ու լի դառնությամբ:  
Ով որ ծաղկել էր որպես ծաղիկ՝  
թափվեց ու ընկավ, փախավ իբր ստվեր.  
հաստատ չի մնա» /Հոր 14.2/:

\*\*\*

«Երկիր, մի ծածկիր արյունն իմ մարմնի.  
թող աղաղակս կանգ չառնի բնավ» /Հոր 16.19/:

\*\*\*

«Քնում է հարուստ, բայց արթնանում է ոչ իբր մեծատուն,  
աչքերն է բացում, տեսնում ամեն բան չքացած ընդմիշտ:  
Ցավեր պիտի գան վրան, ջրի պես,  
գիշերվա խավարը պիտի ծածկի նրան:  
Պիտ խլի նրան խորշակն ու գնա,  
պիտ քշի նրան տեղից հարազատ,  
շպրտի նրան ու չխնայի:  
Փախչելով պիտի փախչի խորշակից» /Հոր 27. 19-22/:

\*\*\*

«Մերկացրեց Տերն ինձ իմ պատմութեանից,  
խոցուեց անձս սուր նետերով՝  
մոտենալով ինձ, ինչպես կամեցավ:  
Ախտերով եմ վարակված.  
ցավերս ետ են դարձել:  
Քամու պես անցավ հոյսը ինձանից,  
Եվ մշուշի պես՝ իմ փրկությունը:  
Հոգիս է լցվել բերնե ի բերան:  
Ինձ համակել են ցավալից օրեր:  
Գիշերները ոսկորներս են խաշվում  
ջղերս են քայքայվել:  
Տերն իր զորությամբ ձեռքը զցել է  
իմ պատմութեանին  
ու պատմութեան ժապավենի պես պատել է շուրջս:  
Մի կավի տեղ է ընդունում նա ինձ.  
Հողն ու մոխիրն են բաժինս դարձել» /Հոբ 30. 14-19/:

\*\*\*

«Այդպիսի ահավոր տեսիլքով է ահա,  
որ զարհուրեցրեց Աստված նրանց՝  
մարդուն անիրավությունից ետ կանգնեցնելու  
եւ նրա մարմինը կործանումից փրկելու համար:  
Նրա հոգին զերծ պահեց մահվանից,  
որպեսզի նա պատերազմում չընկնի:  
Նաեւ կշտամբեց նրան անկողնային հիվանդությամբ,  
Ընդարմացում բերեց նրա բազմակույտ ոսկորներին» /Հոբ 33. 17-19/:

\*\*\*

«Կնորոգի մարմինը նրա, ինչպես ծեփի պատի,  
ու ոսկորները նրա ծուծով կլցվեն:  
Կփափկացնի մարմինը նրա,  
ինչպես մարմինը մանկան,  
ու մարդկանց մեջ կհաստատի  
նրան՝ երիտասարդացած:  
Երբ Տիրոջն աղերսի, կընդունվի Նրա կողմից,  
լուրջ դեմքով կմտնի խոստովանության,  
մանի որ Աստված արդարության  
համար կհատուցի մարդկանց» /Հոբ 33. 25-26/:

\*\*\*

«Յուրաքանչյուր մարդու ըստ նրա  
արարքների կհատուցի Նա,  
ըստ նրա վարքի կփոխադարձի նրան» /Հոբ 34.11/:

ՆՈՐ ՈՒՒՏ

«Եվ ահա Նրա մոտ բերեցին մի անդամալուծ, որ պառկած էր մահճի մեջ: Հիսուս նրանց հավատը տեսնելով՝ ասաց անդամալուծին. «Քո մեղքերը քեզ ներված են» /Մատթ. 9.2/:

\*\*\*

«Ձեզնից մեկը վշտի մեջ է ընկել, թող աղոթի. մեկը բերկրանքի մեջ է, սաղմոս թող ասի, հիվանդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, եւ նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուրով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ուղքի կկանգնեցնի» /Հակ. 5. 13-15/:

\*\*\*

«Սիրելիներ, տարօրինակ մի համարեք այն այրող նեղությունը, որ ձեզ փորձելու համար է, որպես թե մի տարօրինակ բան պատահած լիներ ձեզ: Այլ որպես Քրիստոսի չարչարանքներին մասնակիցներ, ուրախ եղեք, որպեսզի Նրա փառքի ժամանակ էլ ցնծաք եւ ուրախանաք: ... Հավանաբար նրանք, որ չարչարվում են ըստ Աստծո կամքի, բարեգործություն անելով թող իրենց հոգիները հանձնեն Ստեղծողին» /1 Պետ. 4. 12-13, 19/:

\*\*\*

«Բայց մեկը կասի՝ ինչպե՞ս են հարություն առնում մեռելները. կամ՝ ի՞նչ մարմնով պիտի գան: Ամմիտ, ինչ որ դու սերմանում ես չի կենդանանա, եթե չմեռնի: Եվ ինչ որ սերմանում ես, սերմանվածը այն նույն մարմինը չէ, որ ծնվելու է, այլ՝ մի մերկ հատիկ, լինի ցորենի, թե այլ սերմերի: ... Կան նաեւ երկնավոր մարմիններ եւ երկրավոր մարմիններ. բայց այլ է փառքը երկրավորների, այլ է փառքը արեգակի, այլ է փառքը լուսնի եւ այլ է փառքը աստղերի եւ մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ: Այդպես է նաեւ մեռելների հարությունը. սերմանվում է ապականությամբ եւ հարություն է առնում առանց ապականության, սերմանվում է անարգությամբ եւ հարություն է առնում փառքով, սերմանվում է տկարությամբ եւ հարություն է առնում զորությամբ, սերմանվում է շնչավոր մարմին եւ հարություն է առնում հոգեւոր մարմին. եթե կա շնչավոր մարմին, կա եւ՝ հոգեւոր» /1 Կորնթ. 15. 35-45/:

\*\*\*

«Արդ, մի խորհուրդ եմ հայտնում ձեզ, բոլորս էլ պիտի ննջենք, բայց ոչ թե իսկապես բոլորս էլ պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի, եւ մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության, եւ մենք պիտի նորոգվենք, որովհետեւ պետք է, որ այս ապականացու մարմինը անապականություն կրի, եւ այս մահկանացու գոյությունը հագնի անմահություն:

Եվ երբ այս մահկանացու գոյությունը հագնի անմահություն, եւ այս ապականացու մարմինը՝ անապականություն, այն ժամանակ կկատարվի այն խոսքը, որ գրվեց.

«Մահը կուլ գնաց հաղթության:  
Ո՞ւր է, մահ, քո հաղթությունը,  
ո՞ւր է գերեզման, քո խայթոցը»:

Մահի խայթոցը մեղքն է, եւ մեղքի զորությունը՝ օրենքը» /1 Կորնթ. 15. 51-56/:

\*\*\*

«Քանզի մենք գիտենք, որ եթե մեր այս հողեղեն տունը, որ մեր մարմինն է, ավերվի, Աստծուց շինված անձեռակերտ հավիտենական տուն ունենք երկնքում: Եվ այս մարմնի մեջ հառաչում ենք, որովհետեւ փափագում ենք երկնքի բնակությունը հագնել:

Միայն թե երբ այն հագնենք, մերկ չլինենք. մանի որ մինչ այս հողեղեն տան մեջ ենք, հառաչում ենք ծանր բեռան տակ, որովհետեւ չենք ուզում մերկանալ մարմնից, այլ՝ երկնայինը հագնել սրա վրա, որպեսզի ինչ որ



մահկանացու է, կլանվի կյանքից: Եվ Աստված է, որ մեզ պատրաստում է այս փոփոխությանը, Նա, որ տվեց մեզ Հոգու առհավատչյան:

Արդ, ամեն ժամ քաջություն ունենք եւ գիտենք, որ ինչքան երկար մնանք այս մարմնի մեջ, օտարանում ենք Տիրոջից /որովհետեւ հավատով ենք ընթանում եւ ոչ թե երեւոյթների վրա հիմնված/: Եվ վստահություն ունենք ու առավել եւս հաճելի է մեզ դուրս գալ այս մարմնից եւ մտնել Աստծո մոտ» /2 Կորնթ. 5. 1-8/:

\*\*\*

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ով իմ խոսքը լսում եւ հավատում է նրան, ով ինձ առաքեց, ընդունում է հավիտենական կյանքը եւ չի դատապարտվում, այլ մահվանից կյանք անցավ» /Հովհ. 5. 24/:

### ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՀԱՅՐԵՐՆ ԻՆՉՊԵՏ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՎ ՏԱՐԵԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

/Օրինակներ հարանց վարքից/

Սուրբերը հիվանդությունն ընդունում էին որպես Աստծո մեծագույն բարերարություն եւ աշխատում էին հիվանդ ժամանակ հարատեւ փառաբանել ու գոհություն հայտնել Տիրոջը: Նրանք չէին փորձում բուժվել, թեպետեւ վանականների մեջ բազմաթիվ են հրաշալի բուժման օրինակները: Նրանք աշխատում էին համբերությամբ ու խոնարհությամբ դիմանալ աստծո թողտվությամբ իրենց տրված այդ պատժին, հավատալով, որ այն ցանկացած հոգեւոր սխրանքից ավելի հոգեշահ է:

1. Եգիպտական մենաստանում, ուր ձգնում էին բազում մեծագույն սուրբ ձգնավորներ, ապրում էր արդար Բենիամինը: Իր առաքինի վարքի համար Աստված նրան բժշկելու հրաշալի շնորհ տվեց: Նման շնորհ ունենալով նա ինքը դատապարտված էր երկար ժամանակ տառապելու ծանր ջրգողությամբ: Նա արտասովոր կերպով ուռչում էր: Եվ ստիպված եղան նրան իր խցից տեղափոխել ուրիշ, ավելի ընդարձակ խուց: Դրա համար հարկադրված էին նրա խցի դուռը տեղահան անել շեմի հետ: Նոր խցում նրա համար հատուկ նստարան կառուցեցին, քանի որ նա անկողնում պառկել չէր կարողանում: Նման վիճակում գտնվելով արդարը շարունակեց ուրիշներին բուժել: Իսկ նրանց, ովքեր իր տառապանքը տեսնելով ցավակցում էին, մխիթարում էր եւ խնդրում, որ աղոթեն իր հոգու համար եւ չմտածեն մարմնի մասին: «Երբ իմ մարմինն առողջ էր,- ասում էր նա,- ես առանձնապես օգուտ չունեի նրանից: Իսկ հիմա, երբ հիվանդացել է, այն ինձ ոչ մի վնաս չի պատճառում»:
2. Աբբա Պետրոսը պատմում է, որ ինքը մի անգամ արդար Եսայի մենակյացին այցելելով նրան գտնում է ծանր ցավերից տառապելիս: Եվ երբ ցավակցում է, արդարը պատասխանում է. «Նույնիսկ այս սարսափելի ցավերի մեջ հազիվ եմ կարողանում հիշողությանս մեջ պահել մահվան ահեղ ժամը եւ Տիրոջ դատաստանը: Իսկ եթե մարմինս առողջ լիներ, ապա այդ հիշողությունը ինձ համար ինչ որ օտար բան կլիներ: Երբ մարմինն առողջ է, ապա հակված է Աստծո դեմ թշնամական գործեր կատարելու: Վշտերը միջոց են Տիրոջ պատվիրանները պահելու»:
3. Մեծ ձգնավորները եւ հրաշագործները իրենց աշակերտներին չէին բուժում, եթե նրանք Աստծո կամքով հիվանդանում էին, չգրկելով նրանց այն հոգեւոր առաջընթացից, որն անպայման առաջանում է քրիստոնեական համբերությամբ տարած հիվանդությունից: Գազայր մենաստանի առաջնորդ արդար Սերգիյը, որ մեծ Բարսոնոֆիի աշակերտն էր եւ լռության էր տրվել նույն մենաստանում, երկար ժամանակ հիվանդ էր: Ավագ եղբայրներից մի քանիսը Բարսոնոֆին խնդրեցին բուժել նրան: Սուրբ Բարսոնոֆին պատասխանեց. «Իմ

զավակի առողջության համար Աստծուն աղոթել կարող էին այստեղ գտնվող սուրբերից մի քանիսը եւ նա նույնիսկ մեկ օր հիվանդ չէր լինի: Բայց այնժամ նա չէր քաղի համբերության պտուղը: Հիվանդությունը նրա համար շատ օգտակար է համբերության եւ գոհություն հայտնելու համար»:

4. Սուրբ Գրիգոր Զրուցասերը պատմում է, թե մի մարդ կար Ստեփան անունով, որ վանքի վանահայր էր, մի սուրբ այր, որ աչքի էր ընկնում հատկապես համբերության շնորհով: Նա երկնավոր հայրենիքի սիրո համար ամեն ինչ արհամարհում էր եւ խուսափում այս երկրի վրա որեւէ բան ձեռք բերելուց: Նա խուսափում էր աշխարհի աղմուկից եւ զբաղված էր հաճախակի ու երկարատեւ աղոթքներով: Եվ համբերության առաքինությունը այնքան աճեց նրա մեջ, որ նա իր ընկերն էր համարում նրան, ով որ որեւէ վիրավորանք էր հասցնում իրեն: Վիրավորանքին նա պատասխանում էր շնորհակալությամբ: Եթե նրան մի վնաս էին հասցնում, նա համարում էր մեծ օգուտ: Նա իր բոլոր թշնամիներին համարում էր իր օգնականները: Երբ նրա մահվան օրը հասավ, շատերը հավաքվեցին եւ նրանցից մի քանիսը մարմնավոր աչքերով տեսան ներս եկող հրեշտակների: Բոլոր ներկաներն այնպիսի ուժեղ վախ զգացին, որ այդ սուրբ հոգու մարմնից ելնելու պահին ոչ ոք չկարողացավ այդտեղ մնալ եւ բոլորը փախան:

.....  
Եվ ուրեմն մտածենք, որքան սարսափելի կլինի Ամենակարողն Աստված, երբ կգա որպես Արդար Դատավոր, եթե այդպես

վախեցրեց ներկաներին, երբ եկավ ողորմածությամբ ու բարեհաճությամբ: Եվ եթե միայն Նրա անտեսանելի ներկայությունն

այդքան ահալի էր, ուրեմն որքան առավել սարսափելի կլինեն, եթե նա հայտնվեր տեսանելի կերպով:

5. Նույն սուրբ հայրը նշում է, թե իր ժամանակներում Հռոմում Սերվիլի անունով մի մարդ կար, որ թույլ մարմին ուներ եւ Ռոմուլա անունով բարեպաշտ մի կին, որ նույնպես նման հիվանդությամբ տառապում էր երկար տարիներ: Սերվիլին մինչեւ մահը այնպես էր տառապում այդ թուլությունից, որ չէր կարողանում անկողնուց վեր կենալ, ոչ էլ ձեռքը բերանին տանել կամ մի կողքից մյուսին շրջվել: Անկողնուն, առանց շարժվել կարողանալու, զանված էր նաեւ Ռոմուլան: Բայց այդ հիվանդությունը երկուսի համար էլ այնքան արգասաբեր եղավ, պատմում է սուրբ Գրիգորը, խոսելով աստվածային այն նշանների մասին, որ երեւացին նրանց մահվան ժամանակ: Նա գրում է, որ Սերվիլի մահվան ժամանակ լսվում էին հրեշտակային երգեր, իսկ մահվանից քիչ անց տարածվեց ինչ որ անուշահոտություն: Պատմում են, որ նույնը կատարվել է Ռոմուլայի մահվան ժամանակ: Ասում են՝ նրա սենյակում սկզբում մաքուր լույս երեւաց, ապա վերելից հաճելի անուշահոտություն տարածվեց եւ վերջապես լսելի եղան հրեշտակների ձայները, որ հերթով երգում էին: Այս անդամալույծներն ինչո՞ւ համար արժանացան նման պատիվների: Ճշմարիտն ասած միայն անընդհատ ու երկարատեւ հիվանդության համար, որը նրանց զրկել էր որեւէ մեղք գործելու հնարավորությունից, եւ դրա հետ միասին ապաշխարելու հնարավորություն էր տվել: Բացի այդ, նրանք վարժվել էին Աստծո հետ անընդհատ զրուցելուն:

.....  
«Մարմնի անդամներից զրկված լինելը,- ասում է Գրիգորը,- նպաստում էր առաքինությունների ավելացմանը, քանզի նրանք

որքան ավելի քիչ էին կարողանում շարժվել, այնքան ավելի հոգատարությամբ էին վարժվում աղոթքին»:

6. Փռյուզիական անապատի մի մենակյաց, որի անունը Միրոզեն էր, այնպիսի խստակյաց կյանք էր վարում, որ ջրագողություն վաստակեց: Եվ երբ մյուս ծերերը գալիս էին նրա մոտ փորձելով բուժել, նա միշտ ասում էր. «Հայրեր, աղոթեցեք ինձ համար, որպեսզի իմ ներքին մարդը նման հիվանդության չարժանանա, իսկ ինչ վերաբերվում է իմ այծմյան հիվանդությանը, ապա ես խնդրում եմ Տիրոջը, որպեսզի ինձ չազատի նրանից»:

Արդար Պիմեն Ցավագարը ծանր հիվանդանալու ճանապարհով հասավ երկնային արքայության: Նա հիվանդ ծնվեց եւ մեծացավ հիվանդ: Նա իր ծնողներին բազմիցս խնդրեց իրեն վանք ուղարկել, բայց նրանք չէին ցանկանում հրաժարվել իրենց միակ զավակից եւ ժառանգից: Հիվանդությունն այնքան սաստկացավ, որ ծնողները կորցնելով առողջանալու հույսը, նրան Պեչորյան վանք տարան, խնդրելով աղոթել նրա առողջության համար: Մենաստանում, ծնողների խնդրանքով, աղոթեցին նրա տառապանքները թեթեւացնելու համար, բայց տառապյալն արդեն հասկանում էր իր տառապանքների արժեքը եւ նրա՝ հիվանդ մնալու աղոթքը լսելի եղավ Տիրոջը: Պիմենը բազում տարիներ ապրեց ծանր հիվանդությամբ: Ծառայողները հաճախ մոռանում էին նրան, թողնելով առանց հացի ու ջրի, բայց Պիմենն այդ ամենին դիմանում էր ուրախությամբ: Նրա քարանձավ բերեցին մի ուրիշ հիվանդի, որպեսզի միանգամից խնամեն երկուսին էլ: Բայց հաճախ առանց խնամքի էին թողնում երկուսին էլ: «Եղբայր,- մի անգամ Պիմենն ասաց իր կողքին պառկածին,- ծառայողները զգվում են մեզանից: Եթե Աստված քեզ առողջացնի, դու կժառայե՞ս հիվանդներին»: Հիվանդը խոստացավ առողջանալու դեպքում մինչեւ իր մահը ծառայել ուրիշ հիվանդներին: Պիմենի աղոթքով նա առողջացավ եւ սկսեց ծառայել հիվանդին: Մի անգամ նա ծառայության մեջ ծուլացավ եւ հիվանդությունը դարձյալ գլուխ բարձրացրեց: Պիմենը դարձյալ բուժեց նրան եւ ասաց. «Թերահավատ, մի՞թե դու չգիտես, որ հավասար պարգեւ են ստանում եւ հիվանդը, եւ նրան ծառայողը: Դժբախտների համբերությունը իզուր չի կորչում: Այստեղ վիշտ ու նեղություններ, այնտեղ՝ ուրախություն եւ հրճվանք: Դրա համար եմ ես դիմանում ցավին: Աստված, որ առողջացրեց քեզ, կարող է նաեւ ինձ վերադարձնել առողջությունը, բայց ես այդ չեմ ցանկանում: Ով համբերի մինչեւ վերջ, նա կփրկվի: Թող ես այս կյանքում փտեմ, միայն թե այնտեղ անփուտ մարմին ստանամ: Թող այստեղ գարշահոտություն լինի, միայն թե այնտեղ արժանի լինեմ անուշահոտության: Այս գարշահոտ ու նեղ անոթն ի՞նչ է, եթե ոչ դատարան այն գալիք մեծ դատարանից առաջ, տանջանք այն հավիտենական տանջանքին նախորդող:

Պիմենը 20 տարի անցկացրեց տառապանքի մեջ: Մահից առաջ նա առողջացավ, հրաժեշտ տվեց եղբայրներին, եկեղեցում

հաղորդություն ստացավ, խոնարհվեց սուրբ Անտոնի աճյունին եւ ցույց տվեց, թե որտեղ ամփոփեն իր մարմինը:

7. Մի ծերունի ասում էր. «Եթե մարմնի թուլություն ունենաս, փոքրոգություն մի անի, քանզի եթե Տերն ուզում է, որ դու մարմնապես թույլ լինես, ապա դու ո՞վ ես, որ վշտով ընդունես այդ: Մի՞թե Նա չէ, որ քո փոխարեն հոգ է տանում ամեն ինչի համար: Մի՞թե առանց Նրա ես ապրում: Ուրեմն տար համբերությամբ եւ աղաչիր Նրան, որ քեզ տա օգտակարը, այսինքն՝ ինչ որ Ինքն է ցանկանում, այն արա եւ նստիր համբերությամբ, ու սիրով ճաշակիր այն, ինչ տրված է քեզ»:

8. Պախոմ Մեծի աշակերտ Թեոդորը շատ էր տանջվում զխացավից եւ Հայր Պախոմին խնդրեց, որ նա իր աղոթքներով թեթեւացնի հիվանդությունը: Հայր Պախոմն ասաց նրան. «Ձավակս, չլինի՞ կարծում ես, թե որեւէ մեկին ցավ կամ փորձություն է տրվում առանց Տիրոջ համաձայնության: Ուստի համբերիր ցավին եւ խոնարհությամբ դիմացիր: Երբ Աստված կամենա, քեզ առողջություն կտա, իսկ եթե ցանկանա քեզ դարձյալ փորձել, շնորհակալ եղիր այնպես, ինչպես որ Հոբն էր փառաբանում Աստծուն եւ Քրիստոսից ավելի մեծ մխիթարություն կստանաս: Ժուժկալությունը եւ խոնարհ աղոթքը լավ է, բայց հիվանդացածը մեծ պարգեւ

կատանա, եթե մեծահոգի եւ համբերող լինի: Եվ հույսդ ոչ թե դեղի վրա դիր, այլ Աստծո, ու մի մտածիր, իբրեւ թե Նա չի կարող քեզ առողջություն տալ»:

9. Սուրբ Աթանաս Մեծը գալով մահվան մահճում պառկած Նիֆոնտի մոտ, նստեց նրա կողքին ու հարցրեց. «Հայր, մարդը որեւէ օգուտ ո՞ւնի հիվանդությունից»:

.....  
Սուրբ Նիֆոնտը պատասխանեց. «Ինչպես որ ոսկին է կրակի մեջ մաքրվում ժանգից, այնպես էլ հիվանդ մարդն է ազատվում իր մեղքերից»:

10. Սուրբ Սանդուղբն ասում է. «Հիվանդությունը երբեմն ուղարկվում է մեղքերը մաքրելու համար, իսկ երբեմն էլ նրա համար, որպեսզի հպարտությունը խոնարհեցնի: Ողորմածն Աստված տեսնելով, որ որեւէ մեկը ծուլանում է սխրանքների մեջ, նրա մարմինը խոնարհեցնում է տկարությամբ, որպես բերկրալի սխրանք, իսկ երբեմն էլ հոգին մաքրում է չար կրքերից ու մտքերից»:

.....  
Պաղեստինում, Գազայի մոտ աբբա Սերիդի վանքում, մի հիվանդ եղբայր, երբ ցավի նոպայի մեջ ընկավ եւ ծերունի Բարսոնոֆիյից խնդրեց, որ իր աղոթքով օգնի իրեն, սուրբը նրան պատասխանեց. «Օ՛, Տիրոջով սիրելի եղբայր իմ, գիտեմ, որ վստահ ես Քրիստոսով քո հանդեպ իմ ունեցած սիրո մեջ, դրա համար էլ քեզ բացում եմ Աստծո գաղտնիքը: Դու վստահաբար գիտես, որ ես զօր ու գիշեր աղոթում եմ Տիրոջը, որպեսզի Նա փրկի մեզ չարից եւ արժանացնի Իր հավերժական երկնային արքայությանը: Եվ երբ, սովորության համաձայն, ես Տիրոջն աղերսեցի քեզ համար, Նա ինձ ասաց. «Թող, որ փորձեմ նրան իր օգուտի համար եւ թող մարմնական տառապանքի միջոցով բացահայտվի, թե որքան է նրա համբերությունը եւ նա ի՞նչ պիտի ժառանգի իր աղոթքի ու տառապանքների համար»:

11. Բարսոնոֆիի աշխարհիկ եղբայրը, որ արդեն ծերացել էր, աշխարհաթող եղավ, եկավ վանք՝ նրա մոտ: Բայց հիվանդացավ ջրզողությամբ եւ մեծ ծերին խնդրեց աղոթել իր առողջության համար: Սուրբ Բարսոնոֆիյը նրան պատասխանեց. «Այս հիվանդությունը քեզ նրա համար այցելեց, որպեսզի դու Աստծո մոտ անպտուղ չգնաս: Ուրեմն, եթե համբերես եւ շնորհակալ լինես Աստծուն, ապա այն քեզ համար կփոխարինի սխրանքներին, քանզի դու երկար ժամանակ չէ, որ ապրում ես վանականի կյանքով: Մասամբ էլ այդ փորձությունը քեզ ուղարկվեց նրա համար, որ դու ինձ ոչնչություն չհամարեցիր, իսկ քեզ համարեցիր ինձ ճանաչող, այսինքն ինձ համարեցիր մեծ մարդ եւ պարծեցար, որ իմ եղբայրն ես: Սակայն դու չգիտես, որ մենք Ադամի հանցագործության զավակներն ենք՝ հող ու մոխիր: Ուրեմն շնորհակալ եղիր Աստծուն, քեզ նման վիճակի մեջ դնելու համար»:

12. Սուրբ Ոսկեբերանն ասում է. «Եթե տեսնես, որ արդարը վատ վախճան ունենա, հոգով մի ընկճվիր, քանզի դժբախտությունը նրան լուսապսակ է պատրաստում: Աստված ոմանց երկրի վրա է պատժում, որպեսզի թեթևացնի նրանց տառապանքներն այնտեղ, կամ էլ նրանց բոլորովին ազատի դրանցից: Երբ տեսնես, որ

ոմանք նավաբեկության ժամանակ մեռան կամ մնացին փլատակների տակ, կամ խեղդվեցին գետում կամ այլ բռնի մահով վերջ գտան, այն դեպքում, երբ մյուսները նրանց նման եւ նրանցից առավել են մեղանջում, բայց անվնաս են մնում, մի շփոթվիր եւ մի ասա, թե ինչու նույն կերպ մեղանջողները նույն կերպ չպատժվեցին: Աստված թույլ է տալիս, որ մեկը սպանվի, թեթեւացնելով նրա այնտեղի տանջանքները կամ ընդհատում է նրա մեղավոր կյանքը, որպեսզի անմաքուր կյանքը շարունակելով իր համար առավել մեծ պատիժ չվաստակի: Մի ուրիշին նման մահով մեռնել չի թույլատրում, որպեսզի դաս առնելով առաջինի ստացած պատժից, դառնա առաքինի: Եթե նման պատիժը դաս չի դառնում, մեղավորը ոչ թե Աստված է, այլ պատժվողի անփութությունը:

ՎԻՇՏՐ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏԱՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ

1. Վիշտը կարելի է համեմատել դառը դեղի հետ, որը եթե փաթաթենք համբերությամբ, ապա հնարավոր է հեշտորեն կուլ տալ: Բայց եթե սկսենք անգիտորեն այն ծամել, այն կդառնա զգվելի եւ անտանելի /Գրիգորի Ղյաջենկո/:

2. - Դու վշտանում ես,- ասաց սուրբ Անտոնը իր կուրության համար տխրող սուրբ Դիդիմին,- որ զրկված ես տեսողությունից, աչքերից, որոնցով նայում են մոծակներն ու մլակները, աննշան, փոքրիկ կենդանիները: Ավելի լավ է՝ ուրախացիր, որ քերովբեական աչքեր ունես, որոնցով տեսնում ես Աստծուն եւ ընկալում լույսը: Իսկ դա մարմնավոր տեսողությունից ավելի լավ է /Գրիգորի Ղյաջենկո/:

3. Մայր Սինկղիտիկան ասում է. «Թույլտվություն ստանալով /Տիրոջից.- հեղ./ դեւը ծանր հիվանդություններ է տալիս, որպեսզի փոքրոգի մարդիկ թուլանան առ Աստված ունեցած սիրո մեջ: Այդ պատճառով երբեմն մարմինը տառապում է ուժեղ ջերմից եւ պապակվում անտանելի ծարավից: Եթե դու մեղավոր ես, ապա հիվանդությունից տառապելիս հիշիր ապագա պատժի մասին, հավերժական կրակի, դատաստանից հետո գալիք տանջանքների մասին եւ փոքրագություն մի արա, այլ ուրախացիր, որ Աստված այցելել է քեզ եւ կրկնիր այս գեղեցիկ խոսքը. «Տերն ինձ խրատելով պատժեց, բայց չմատնեց մահվան» /Սաղմ. 117. 18/: Դու երկաթ ես եւ կրակը մաքրում է քո ժանգը: Եթե դու արդար ես եւ հիվանդություն ես ստանում, ապա դրանով մեծից անցնում ես մեծագույնին: Դու ոսկի ես եւ կրակով ավելի ես մաքրվում: Դու փորձվում ես տենդո՞վ, պատժվում ես մրսածությամբ: Բայց Գիրքն ասում է. «Մենք անցանք հրի ու ջրի միջով, բայց Դու մեզ անդորր տվիր» /Սաղմ. 65. 12/:

Դու հասել ես առաջինին, սպասիր եւ երկրորդին: Առաջադիմելով առաքինությունների մեջ կրկնիր արդարի խոսքերը. «Աղքատ ու վշտացած եմ ես» /Սաղմ. 68. 30/: Այս կրկնակի վիշտը քեզ կատարյալ կդարձնի, քանզի սաղմոսերգուն ասում է. «Նեղության մեջ ինձ անդորր տվիր» /Սաղմ. 4. 2./:

Կարիքի ու վշտի այս ուսումնարանների մեջ քո հոգին կպատրաստես սխրանքների /Գրիգորի Ղյաջենկո/:

4. Բոլոր սուրբերն իրենց կյանքն անց են կացրել վշտերի ու ցավերի, հալածանքների ու համբերանքի մեջ: Միայն դո՞ւ ես ցանկանում առանց վշտի ու տառապանքի ապրել: Թե՞ միայն դու ես ցանկանում Աստծո ընտրյալների մեջ միակը լինել, որ չի ցանկանում տառապել: Թող դա քեզ չպատահի:

5. «Եթե վտանգը, աղքատությունը, վիշտը տատանում են քո քաջությունը, նվազեցնում քո համբերությունը, հիշիր Քրիստոսի մորը՝ Որդու խաչի տակ կանգնած» /Ֆիլարետ, Մոսկվայի եպիսկոպոս/:

6. «Եթե մեղքը չճանաչած Քրիստոսը տառապեց, ապա վայել է, որ մենք՝ մեղավորներս տրտնջանք» /Ֆիլարետ/:

7. «Եթե անմեղ Քրիստոսը մեր մեղքերի համար բարեհաճեց տառապանք ու մահ ճաշակել, մի՞թե դու չես ցանկանում անհամեմատ ավելի փոքր տառապանք ճաշակել, քո Աստծո առաջ գործած մեղքերի համար, թեկուզեի դու անմեղ ես մարդկանց համար» /Ֆիլարետ/:

8. «Հանուն Քրիստոսի եւ Քրիստոսի հետ համբերի մինչեւ վերջ, եթե ցանկանում ես Նրա հետ թագավորել» /Թովմաս Գեմբացի/:

9. «Ինչպես որ մուրճը ջարդում է քարը, այնպես էլ վշտերը քայքայում են կոպտությունը, անզայությունը, հպարտությունը եւ սրտի անվախությունը» /Հակոբ, Նիժեգորոդի եպիսկոպոս/:

10. «Երբ հայրը թողնում է որդուն անպատիժ եւ թույլ է տալիս, որ իր կամքով ապրի, ապա նշան է, որ նրանից ձեռք է քաշել: Այդպես էլ երբ Աստված թողնում է մարդուն առանց պատժի, դա նշան է, որ նրան զրկել է Իր ողորմությունից: Եվ դա այլ բան չի նշանակում, քան Աստծո հավերժական գյարույթին արժանանալ /Սբ. Տիմոն Զադոնսկի/:

11. «Ինչ վիշտ էլ որ այցելի քեզ, ոչ ոքի մի մեղադրիր, բացի քեզնից, եւ ասա. «Ղա ինձ պատահեց իմ մեղքերի պատճառով» /Աբբա Օր/:

12. «Մի ասա. «Ա՛խ, ինչ դժբախտ եմ ես», այլ ասա. «Ղա դեռ քիչ է իմ մեղքերի համեմատ» /Ինոկենտի, Մոսկվայի եպիսկոպոս/:

13. «Հաճելին ընդունելու մեջ ի՞նչ առաքինություն կա: Վշտալին ընդունել բարեհոգությամբ, Աստծո կամքին հնազանդվելով. ահա սխրանքը, ահա առաքինությունը, ահա պարգև ստացած ոսկին» /Ֆիլարետ, Մոսկվայի եպիսկոպոս/:

14. «Ոսկին հալում են, որպեսզի մաքրվի, իսկ արդարներին Աստված վիշտ է տալիս նրա համար, որպեսզի ավելացնի նրանց սրբությունը» /Հակոբ, Նիժեգորոդի արքեպիսկոպոս/:

15. «Ղիմացիր նեղություններին, որովհետեւ նրանց մեջ, ինչպես փշերի մեջ վարդերը, աճում եւ դաստիարակվում են առաքինությունները» /սուրբ Նեղոս Սինայեցի/:

16. «Եթե ուզում ես երկնքի արքայությունը մտնել, ապա քեզ վշտեր կամեցիր, քանզի ով նեղություն ու վիշտ չի տեսել, նա չի կարող մտնել այնտեղ, քանզի «անծուկ է դուռը եւ նեղ՝ ճանապարհը» /Մատթ. 7. 14/:

17. «Բոլոր երկրավոր վշտերը ապագա ուրախության համեմատությամբ նույնն են, ինչ փոքրիկ միջատի խայթոցից առաջացած վայրկենական ցավը» /Գրիգորի Ղյաչենկո/:

18. «Ներկան տանենք քաջաբար, ուրախանալով ապագայով» /Ֆիլարետ/:

19. «Խաղաղության պահին փոթորիկի սպասիր, առողջ ժամանակ՝ հիվանդության, հարստության ժամանակ՝ աղքատանալու, կշտության պահին՝ սովի եւ չես ընկնի պատահող դժբախտությունների ծանրության տակ» /Գ. Ղյաչենկո/:

20. «Տիրոջը խնդրիր ոչ միայն նրա համար, որ Նա քեզ ազատի ներկա փորձանքներից, այլ առավել եւս՝ որպեսզի Նա դրանց դիմանալու ուժ տա» /Ինոկենտի, Մոսկվայի եպիսկոպոս/:

21. «Հոգիների ու մարմինների բժիշկն օգտագործում է վշտի գործիքը, որպեսզի արմատախիլ անի եւ ջնջի մեղքերի հետքերը եւ տառապանքի կրակով այրի դեպի մեղքը հակված լինելու վարակը» /Ֆիլարետ, Մոսկվայի եպիսկոպոս/:

22. «Դժբախտությունն ընդունիր ոչ թե որպես տանջող ու թշնամի, այլ որպես իսկական պատիժ մեղքերիդ համար, որպես հոգեկան ցավերի բժիշկ, որպես Աստծո կողմից ուղարկված, որպես առաքինության լրաբեր, քանզի. «Տերը ում սիրում է՝ խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է» /Եբր. 12. 6/ /Գ. Ղյաչենկո/:

23. «Վերքին դրված սպեղանին այն ժամանակ է օգուտ տալիս, երբ հիվանդը համբերությամբ այն կրում է իր խոցերի վրա: Հակառակ դեպքում, նույնիսկ ամենալավ սպեղանին, եթե անժամանակ ես պոկում վերքի վրայից, օգուտ չի տալիս հիվանդին: Նույնը կարելի է ասել տառապանքի մասին. նրանց ժամանակ անհամբերությունը կարող է նրանք դարձնել անօգուտ, անուժ իրենց բարի նպատակին կամ այն նպատակին ծառայելու որ նախատեսել է Նախախնամությունը՝ այն մեզ ուղարկելով /Ֆիլարետ, Չեռնիգովի արքեպիսկոպոս/:

24. «Փորձություններին եւ վշտերին դիմակայելու համար հավատա, որ մեզ հետ ամեն ինչ կատարվում է Աստծո կամքին համաձայն» /Պարֆենի վարդապետ/:

25. «Մեր Աստված առկա է ամեն տեղ, հետեւաբար Նա լսում է մեր յուրաքանչյուր հոգոցը, տեսնում արցունքի ամեն մի կաթիլը, որ հեղում ենք մենք: Մեր Աստվածն ամենակարող է, հետեւաբար Նա կարող է մեզ ազատել ցանկացած թշնամուց, մեզ հետ խլել մահվան երախից: Մեր Աստվածը բարի է, հետեւաբար Նա ուզում է, որպեսզի մենք վայելենք Իր նվիրած բարեկեցիկ կյանքը: Եվ այդ ամենով հանդերձ, եթե մեզ որեւէ դժբախտություն է տալիս, ապա դա նշանակում է, որ դա Աստված մեզ համար անհրաժեշտ եւ օգտակար է համարում» /Գրիգորի Դյաչենկո/:

26. «Եթե Բարին տառապանքներ է ուղարկում, ապա իհարկե, տառապանքի մեջ կա ինչ որ բարիք» /Գրիգորի Դյաչենկո/:

27. «Ձեռքը սուր գործիք վերցրած երեխային որքան էլ համոզեք, որ իրեն վնաս չտա, արդյունք չի ունենա, եթե այն չառնեք նրա ձեռքից: Այդպես էլ Աստված է երբեմն ստիպված լինում մարդուց ետ վերցնել առողջությունը, վաստակը եւ այլ բարիքներ, երբ մարդը դրանք օգտագործելով ո՛չ խղձի ծայնն է լսում, ո՛չ օրենքի զգուշացումը եւ դրանք օգտագործում է ի վնաս իրեն» /Գրիգորի Դյաչենկո/:

28. «Քեզ չէ՞ն վախեցնում ո՛չ հայրդ, ո՛չ ուսուցիչդ, ո՛չ պետդ, ո՛չ օրենսդիրը, ո՛չ դատավո՞րը, քեզ համար հեղինակություն չէ՞ ընկերդ, քեզ նույնիսկ խի՞ղճդ չի ուղղում: Այդ դեպքում գալիս է մարմնի հիվանդությունը եւ հաճախ ուղղում է ամեն ինչ» /Ոսկեբերան/:

29. «Խոնարհվիր երջանկության մեջ, որպեսզի Աստծո ծանր ձեռքը քեզ դժբախտությամբ չխոնարհեցնի» /Ավագ երեց Պ. Սոկոլով/:

30. «Համբերատարությունը պետք է տարածվի մարդու ողջ կյանքի վրա, ողջ մարդկության ճակատագրի վրա... Անհամբերության մեկ ըրպեն կարող է կործանել տարիներ ու դարեր» /Ֆիլարետ, Մոսկվայի միտրոպոլիտ/:

31. «Առանց համբերության սխրանք չկա, իսկ առանց սխրանքի ո՛չ առաքինություն կա, ո՛չ հոգեւոր պարգեւ, ո՛չ փրկություն, քանզի Երկնքի Արքայություն ձեռք բերելու համար ձգտել է պետք» /Ֆիլարետ/ /Սյուրբերի մեծ մասը՝ ըստ Գրիգորի Դյաչենկոյի վերը նշված գրքի/:

32. «Կամ դեւերն իրենք են փորձում մեզ, կամ մեր դեմ զինում են այնպիսի մարդկանց, որոնք վախ չունեն Աստծուց: Իրենք են փորձում, երբ առանձնանում ենք մարդկանցից, /ինչպես Տերը փորձվեց անապատում/ եւ փորձում են մարդկանց միջոցով /ինչպես Տերը փորձվեց փարիսեցիներից/» /Մաքսիմ Խոստովոնահայր/:

33. «Ինչո՞ւ է մարդու համար անհայտ ու անիմանալի մահվան ժամը եւ ձեւը: Մարդասեր Աստված այդպես է արել մեր փրկության համար: Եվ նրա համար, քանի որ մահվան ժամը չիմանալը մահկանացուի մեջ առաջացնում է վախ, վախն առաջացնում է ժուժկալություն, իսկ ժուժկալությունը պակասեցնում է մեղքի եւ անկման հավանականությունը»: /Պանտելեյմոն վարդապետ/:

34. «Մահը որքան շատ սպառնա մեզ, այնքան արագ կցնդի, մեղքի թովչանքը, մենք ավելի թանկ կգնահատենք Աստծո կողմից մեզ տրված տաղանդները» /Պանտելեյմոն վարդապետ/:

35. Մարդիկ «մինչև մեղանչելը Աստծո նման անմահ, անկիրք եւ առանց հիվանդությունների էին: Ընկնելուց անմիջապես հետո նրանք կորցրեցին Աստծո այդ շնորհը եւ մահը նրանց, իսկ նրանց միջոցով նաեւ բոլորի վրա, իշխանություն ստացավ» /Պանտելեյմոն վարդապետ/:

36. «Մարդու անմահությունը կայանում է նրանում, որ նրա հոգին մահից հետո շարունակում է ապրել մարմնից անջատ, եւ մարդն իր գոյությունը շարունակում է այլ աշխարհում: Մահը չի դադարեցնում մարդու գոյատեւումը, այլ ձեւափոխում է այն» /Պանտելեյմոն վարդապետ/:

37. «Ով չունի հանդերձյալ կյանքի հույսը, նա չի կարող իսկական քրիստոնյա համարվել, քանզի իսկական քրիստոնեության հետ պետք է միավորված լինի Քրիստոսի հայտնության եւ ապագա կյանքի հույսը» /Պանտելեյմոն վարդապետ/:

38. «Քանզի հնարավոր չէ, որ հոգին լինի միեւնույն վիճակում, այլ նա մշտապես առաջադիմում է կամ լավի, կամ վատի մեջ: Ուստի ամեն ոք, որ ցանկանում է փրկվել, պետք է ոչ միայն չարիք չգործի, այլեւ պարտավոր է բարիք գործել, , ինչպես ասված է սաղմոսում. «Խուսափիր չարից եւ գործիր բարին», չի ասված միայն՝ խուսափիր չարից, այլեւ՝ գործիր բարին» /Աբբա Դորոթեոս/:

39. «Մեղքն այն չէ, որ մարդը դիմում է բժշկի, այլ այն, որ հիվանդն իր ապաքինման ողջ հույսը միայն բժշկի ու բժշկական միջոցների վրա է դնում՝ մոռանալով, որ ամեն ինչ կախված է Ամենակարող եւ Ամենողորմ Աստծուց»: /Ամբրոսիա Օպտինցի/:

40. «Ով մեղանչում է Արարչի առջեւ, նա կընկնի բժշկի ձեռքը»: /Սիրաք 38-15/:

41. «Մեղքը արարածների ապստամբությունը, խռովությունն է Արարչի դեմ» /Հովհանն Կրոնշտադեցի/:

42. «Բժիշկն ինքը չի բուժում, այլ նրա միջոցով բուժում է Աստված: Աստված բժշկին ներշնչում է եւ նա դուրս է գրում ճշմարիտ դեղամիջոց: Իսկ երբ Աստված չի օգնում բժշկին, չգիտեմ բժիշկներից որեւէ մեկը ճշմարիտ դեղամիջոց դուրս գրում է, թե՞ ոչ: Դիմեք բժշկի, բայց այդ նույն ժամանակ ավելի հաճախ Տիրոջը եւ Նրա սրբերին աղոթեցեք, որպեսզի բժշկին իմաստություն տան ճշմարիտ դեղամիջոց գտնելու» /Թեոփան Ճգնակյաց/:

43. «Հիվանդությունն արատ չէ, ոչ էլ նշան է Աստծուց մերժված լինելու: Հակառակը, նաեւ այդ է Աստծո ողորմություն: Տիրոջից եկող ամեն ինչ ողորմածություն է. լինի հիվանդություն, լինի աղքատություն, թե փորձանք»: /Թեոփան Ճգնակյաց/:

44. «Արյունն ու մարմինը ոչինչ այնպես չի խոնարհեցնում, ինչպես հիվանդությունը» /Թեոփան Ճգնակյաց/:

45. «Որքան ավելի ճարակված լինեմ

Անբժշկելի, ծանր ու անամոք վերք ու ցավերով,  
Դրա համեմատ այնքան առավել ու կրկնապատիկ  
Բարձրյալ բժշկիդ իմաստությունը ամենահնար  
Ցուցադրվելով պիտի հռչակվի.  
Ըստ իմ պարտքերի առավելության  
Եվ փոխատվիդ շռայլությունը, շնորհաբաշխմամբ,  
Բարեբանվելով պիտի պսակվի,  
Ըստ առակի քո խնկելի ու սուրբ»: /Գրիգոր Նարեկացի/

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՂՈՒԹՔՆԵՐ

- ՍԱՂՄՈՍՆԵՐ.- Գ, Զ, ԻԲ, ԻԶ, Դ, Խ, Ծ



- ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ- Բանք ԻԸ, ԽԱ, ԽԲ, ԽԳ, ՂԴ
- Աղօթք յորժամ յորոգայթ անկանի ոք՝ ասացեալ սրբոյ Գրիգորի Մերոյ Լուսաւորչին
- Աղօթք վասն կապանաց դիւաց եւ կախարդաց եւ վասն աղանդաւորաց
- ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ «Հաւատով խոստումանիմ», գլ. ԺԴ, ԺԵ

